


Գ. ԵՅԽԼԵՐ

ՏԱՐԱՍ
ՇԵՎՋԵՆԿՈ



891.79.092 ՇԵՎՋԵՆԿՈ

5-49






19 NOV 2010

ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԸ

891.79.992 ՇԻՎԼԵՐ

Է-49

Գ. ԵՅԽԼԵՐ



Տ. Գ. ՇԵՎԾԵՆԿԻ. ԻճՆԱՆԻԿԱՐ, 1840 թ.

ՏԱՐԱՍ ՇԵՎԾԵՆԿԻ

(Կենսագրական ակնարկ)

ՀԱՅՊԵՏՆՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1940

15.04.2013

15714



61059-67

Г. ЭЙХЛЕР

ТАРАС ШЕВЧЕНКО

Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.



Նկար Շեվչենկոյի

I

«Իմ առջև մեր խղճուկ, հին ու ճերմակ խրճիթն է, ծղոտե մթազնած կաուրով և սև ծխնելույզով, իսկ խրճիթի «կողքի պատի» մոտ խնձորենին է՝ կարմրաթուշ խնձորենի-րով, իսկ խնձորենու շուրջը ծաղկանոցը, վոր այնպես սիրում էր իմ անմոռանալի քույրը և իմ համբերատար, իմ քնքույշ դայակը: Իսկ դարպասի մոտ կանգնած է մի հին, ճյուղա-վորված ուռենի՝ կատարը չորացած, իսկ ուռե-նուց այն կողմը՝ «կլունյան» (հացի ամբար),

խակ «կլունյայից» այն կողմը՝ լանջնիվայը արդեն այդին և փռված, խակայգու այն կողմում—«լեվաղան» (խոռհարքը), խակ «լեվադայից» այն կողմը՝ հովիտն և, խաչ հովտում մի անդորր, հազիվ խոխոջող վտակ, ուռենիներով և փռունչով զարդարված, յայնաաերե մուգ-կանաչ կռատուկներով պատած: Իսկ այդ վտակում լողանում է զնդլիկ, չիկահեր մի աղա. լողանալուց հետո նա վազում է ստվերաչատ այգին, ընկնում առաջին խակ տանձենու տակ և քնում... Արթնանալով նա նայում է դիմացի սարին և մտածում: «Տեսնես ի՞նչ կա սարի այն կողմում... Պետք է վոր այնտեղ յերկաթե սյուներ լինեն, վոր պահում են յերկի՛նքը...»

Այսպես և վերհիշում իր մանկությունը Տարաս Գրիգորեիչ Շեվչենկոն:

Իր մանկությունը նա անց է կացրել Կիևի նահանգի Զվենիգորոդսկի գավառի Կիրիլովկա գյուղում, ուստի և Կիրիլովկան կոչում է իր հայրենիքը:

Այնինչ նա ծնվել է նույն այդ գավառի Մորինցի գյուղում, 1814 թվի մարտի 9-ին (հին տոմարով՝ փետրվարի 25-ին):

Տարաս Գրիգորեիչի հայրը՝ Գրիգորիյ Շեվչենկոն ուկրաինական խոշոր կալվածատերերից մեկի՝ Ննգելզարդաի ճորա գյուղացին էր:

Գրիգորիյ Շեվչենկոյի ընտանիքը մեծ



եր—հինգ յերեխա: Ընտանիքի հետ եր և հարյուրամյա պապը, Գրիգորիյ Շեվչենկոյի հայրը, արհեստով կոշկակար:

Ընտանիքը վատ եր ապրում—տունը նեղվածք եր, կուշտ փոքրով հաց չեյին ուտում նրանք, ինչպես և Կիրիլովկայի բոլոր գյուղացիները:

Կալվածատերը հարուստ եր. նրա տներինության տակ կային տասնյոթ հազար ձորտ գյուղացիներ, շատ հոյակապ տներ, արգավանդ հողեր, ազնվացեղ ձիեր: Մինչդեռ նրա՝ Կիրիլովկայի գյուղացիները մի կերպ փոքրփոքր եյին իրենց փոքրիկ (մեկ-յերկու գեսյատին) ուժասպառ հողակտորները և յուրաքանչյուր յերեք տնտեսութուն ուներ հալից ընկած մի վատ ձի:

Կիրիլովկացի գյուղացիների ամբողջ ուժը սպառվում եր կալվածատիրոջ մոտ կատարվող պարտադիր աշխատանքի վրա:

Տարաս Շեվչենկոյի հայրն ու մայրը նույնպես աշխատում եյին կալվածատիրոջ մոտ և համարյա թե տանը չեյին լինում: Յերեխաները թողնված եյին անխնամ, իրենց կամքին: Փոքրիկ Տարասը գնում եր ուկրաինական լայնարձակ տափաստանները, որեր արունակ թափառում եր արևի տակ, յերգեր յերգում, յերազում:

Մանկության տարիներին նա շատ լեզենդներ ու հիշողություններ եր լսել հայրենի Ու-

կրաինայի մասին իր հարյուրամյա պապից և համագյուղացի ծերերից: Նա լսել եր Զապորոժի Սեչի, Գոնտի և Փեթեղնյակի*) մասին, գյուղացիական մեծ ապստամբության՝ ընդդեմ լեհական չլյախտայի և այն մասին, թե զապորոժցի-կաղակներն ինչպես են ջարդել լեհական պաներին, թե նրանք ինչպես են կռվել ազատության և անկախության համար... Այդ պատմությունները խորը նշանակություն նրա մանուկ գիտակցության մեջ:

Տարասը հազվադեպ եր տեսնում իր հորը, ավելի ուշ-ուշ՝ մորը: Նրա համար միակ մոտիկ, սրտակից մարդը իր քույրն եր—Կատրյան: Սա քնքշորեն, մայրաբար սիրում եր նրան:

Սակայն չուտով Կատրյան ամուսնացավ և գնաց ուրիշ գյուղ: Հենց այդ տարին մեռավ Տարասի մայրը: Նրա հայրն ամուսնացավ ուրիշի հետ:

*) Запорожская сечь—ուկրաինական կաղակական կազմակերպություն, վոր առաջացավ 16-րդ դարում Դնեպրի անտառոտ կղզիների վրա: Զապորոժցիները հաղթամական հետ մասնակցել են ուկրաինական գյուղացիության մի շարք ապստամբություններին՝ ընդդեմ Ռուսաստանի ինքնակալության և կալվածատիրության: Гонта, Иван (մեռել է 1768 թ.) և Железняк հաղթական-գյուղացիական ապստամբության (18-րդ դարում, Ուկրաինա) ղեկավարներ: Ծ. Թ.

Խորթ մայրն իր յերեխաներն ուներ, ըն-
տանիքը մեծացավ, կյանքը առաջվանից ել
տվելի դժվարացավ:

Փոքրիկ Տարասը հաճախ փախչում էր
տնից, լսում կույր կորզար-բանդուրիստնե-
րին, յերգում էր իր սիրած տխուր յերգերը:

Նա յերանի յեր տալիս կորզարներին: Նա
մինչև իսկ յերանի յեր տալիս այն փոքրիկ
տղաներին, վորոնք կույր կորզարների թեից
բռնած առաջնորդում եյին նրանց: Յեվ քա-
նի՛-քանի՛ անգամ նա ձիդ ու ջանք թափեց
հեռանալ նրանց հետ, ինչքան վոր աչքդ կրա-
րում ե...

Չնայած ճորտ գյուղացու կյանքի ամեն
տեսակ դժվարություններին՝ Գրիգորիյ Շեվ-
չենկոն Տարասին գպրոց տվեց: Բայց նա,
այդ ճորտ գյուղացին, վո՞րտեղ կարող էր
առաջ իր վորդուն սովորելու: Մի՞թե այն յեկե-
ղեցական-ծխական գպրոցը:

Տարասը շատ արագ գրել-կարդալ սովո-
րեց:

Նրա ուսուցիչը՝ տիրացու Սովգերը՝ բը-
թամիտ մարդ էր: Նա գիտեր միայն իր յե-
կեղեցական գրքերը — ժամագիրքը և սագ-
մոսագիրքը: Նրա մտքովն ել չէր կարող
անցնել, վոր իր աշակերտը — արտասովոր,
հարուստ ձիրքեր ունեցող մի յերեխա յե:
Տարասը նկարելու մեծ սեր ուներ: Նա նկա-
րում էր ամեն տեղ, ուր միայն կարող էր.
Թղթի կտորի վրա, պատին, տախտակի վրա:

Տիրացու Սովգերը դաժանաբար հալածում էր
Տարասին՝ նկարելու ամեն մի փորձ անելու
համար:

Նա իր աշակերտին հարկադրում էր
սե ու բիրտ աշխատանք կատարել. ջուր բե-
րել գետակից, փայտ ջարդել, աման լվալ ու
մաքրել, վառարանները վառել, աղբը գե-
նածել:

1825 թվին մեռավ Տարասի հայրը:

Մեռնելիս, հայրն իր մոտ կանչեց բոլոր
յերեխաներին և նրանց մեջ բաժանեց իր աղ-
քատիկ գույքը:

— Տարաս վորդուս, — առաց նա, յերե-
խաներին հրաժեշտ տալիս, — իմ տնտեսու-
թյունից վոչինչ պետք չե. նա սովորական
մարդ չի դառնա. նրանից դուրս կգա կամ
չատ լավ մի մարդ, կամ մեծ սրիկա...

Տարասը մնաց միանգամայն վորը: Խորթ
մայրը նրան հովվության տվեց: Նա պետք և
առավոտները տափաստան քչեր անասուննե-
րին: Մտնում էր մուլախոտերի մեջ և այնտեղ
պառկում, նայելով դեպի ուկրաինական շոգ
յերկինքը:

Նկարելու տենչը չէր թողնում նրան:
Թղթի կտորներից նա մի փոքրիկ գիրք սար-
քեց իր համար: Այդ գրքույկի մեջ նա ժողո-
վրդական կոչյազկաններ*) էր գրում, եջերը
գարդարում նկարներով:

*) Ծննդյան շնորհավորանք և յերգեր: Ծ. Թ.

Այն որերին նա մի փոքրիկ ընկերուհի ուներ—Ոկսանա Կովալենկո անունով: Ոկսանան նույնպես ճորտ էր: Տարասը յերգեր էր յերգում նրա համար, իր նկարներն էր ցույց տալիս:

Յեկավ աշունը: Խորթ մայրը Տարասին դպրոց տվեց, բայց այլևս վոչ թե Սովգիրի, այլ մի ուրիշ տիրացուի— Բուզորսկու մոտ: Բուզորսկին դաժան մարդ էր: Նա ամեն շաբաթ, անխորհրդաբար, ծեծում էր իր աշակերտներին— անմեղ թե մեղավոր:

Առանձնապես ծանր էր Տարասի վիճակը. նա միշտ դպրոցի շենքում էր ապրում (խորթ մայրը նրան թույլ չէր տալիս տուն՝ իր մոտ), և տիրացուն հատուկ վերաբերմունք ուներ նրա նկատմամբ: Յեղած-չեղած ուսուցումը քերականական կանոններ և աղոթքներ անգիր անեին էր: Մինչև իսկ ընդհանուր ծեծի ժամանակ Բուզորսկին պահանջում էր, վոր աշակերտները բարձրաձայն աղոթք ասեն:

Դասատուի այդ պատիժները չէին դարձաճանաչում յերիտասարդ Շեվչենկոյին: Այն ջահել տարիներին արդեն նա այնքան կուպտություն և վոչ-մարդկային դաժանություն էր տեսնում, ապա և՛ քաղց, չքավորություն, գյուղացիների անելանելի ստրկություն:

Մի անգամ Բուզորսկին Տարասի ձեռքից հափշտակեց մի զույգ կոշկատակացու կաշի, վոր Տարասն ստացել էր մի գյուղացուց,

ննջեցյալի վրա սաղմոսագիրք կարդալու համար: Տղան բողոք հայտնեց: Բուզորսկին սաստիկ ծեծեց նրան:

«Իմ մանկական սիրտը միջինապատիկ վերավորված էր այդ բռնակալական սեմինարիայի*) դավալի արարմունքով և յեսավարտեցի այնպես, ինչպես անում են համբերությունը կորցրած անաչառպան մարդիկ, — վրիժառությամբ և փախուստով: Մի անգամ նրան անդգա վիճակում հարբած տեսնելով, յես նրա դեմ գործադրեցի իր սեփական զենքը— գանաժեծը— և, վորքան մանկական ուժերս էյին պատում, փոխհատուցեցի իր վողջ դաժանության համար»:

Դրանից հետո Տարասը մի տո ժամանակ թաքնվում էր բարձր մուխոտների մեջ: Իրինա քույրը ուտելիք էր բերում նրան: Հետո նա փախավ Լիսյանկու կոչված ավանը՝ մի նկարիչ—դպրի մոտ: Դպիրը Սովգիրից և Բուզորսկուց վոչնչով լավ չէր: Տարասը սրտ մոտից ել փախավ:

Նա ճամբա ընկավ դեպի Տարասովկա գյուղը, մի ներկարար տիրացուի մոտ, վորը շրջակայքում հայտնի յեր վորպես տաղանդա-

*) Տիրացուն մի ժամանակ սովորել էր յեկեղեցական դպրոցում, վորը սեմինարիա յեր կոչվում:

վոր սրբապատկերանկարիչ: Տիրացուն չընդունեց Տարասին և տղան սկսեց գյուղից գյուղ անցնել— արդյոք չի՞ գտնվի մի լավ ուսուցիչ: Նա այնպե՛ս էր ուզում շուտով նկարիչ դառնալ: Սակայն նրա վորոնումներն ապարդյուն անցան:

Այն ժամանակ նա տուն վերադարձավ և նորից հովվության գնաց: Իսկ ձմեռը վորպես բատրակ վարձվեց քահանայի մոտ: Շատ չանցած նա պատահամբ տեղեկացավ, վոր մոտակա Ուխտնովկա գյուղում մի ներկարար— նկարիչ կա: Վաղ պարնանը, նոր էր ձյունը հալել, նա վոտարորիկ ճամբա ընկավ Ուխտնովկա: Ներկարարը լավ ընդունեց նրան և սկսեց նկարչութուն սովորեցնել: Սակայն կարճատև յեղավ Տարասի յերջանկությունը. հենց վոր ներկարարն իմացավ, թե արդեն լրբացել է Տարասի տանհինգ տարին, նա վախեցած պահանջեց, վոր ձորտ պատանին գնա իրենց կառավարչի մոտ և նրանից թույլտվություն ստանա՝ ուրիշ գյուղում ապրելու համար:

Տարասը գնաց կառավարչի մոտ: Սա մի հայացք գցեց նրա վրա և արձակման վկայագիր չավեց: Տարասին թողին կալվածատիրոջ տանը:

Նա յերազում էր նկարիչ դառնալ, մինչդեռ նրան խոհարարի աշակերտ դարձրին:

Ստիպված էր փայտ ջարդել ու կրել,

դեանախնձոր մաքրել, ջրհորից ջուր հանել, արբել-փայլեցնել պղնձե սմաններ, աղտեղություններ թափել...

Տարասը թախիժով էր հիշում ազատ տափաստանը և իր սիրելի ընկերուհի Ոկոսանին: Սակայն բախտը ինչքան էլ վոր ճնշեր նրան, նա գլուխը չէր խոնարհում: Խոհանոցային շիկացած սալի մոտ, բիրտ խոհարարի ձեռի տակ, տղան յերազում էր գալիք լավ ուրերը:

Ազատ բուհներին նա քաշվում էր հովառուն ալգին և այնտեղ նկարում: Պատահում էր, վոր նրան բռնում էյին այդ աշխատանքով զբաղված և խիստ պատժում: Սակայն նա համառ էր, անկոտրում, մի որ հետո նա նորից իր նկարն էր անում:

Թե ներկերն էյին ձեռքից առնում, մատիտով էր նկարում: Մատիտն էյին խլում՝ ածուխով էր նկարում: Թուղթն էյին խլում՝ պատերին էր նկարում...

Մի տարի անց կառավարիչը նրան ուղարկեց Վիլնո բա՛րինի մոտ, գրելով, թե «պետքական է վորպես սենյակում նկարներ անող»:

Սակայն բարինը այլ կերպ վճռեց Տարասի բախտը: Նրան դուր յեկավ խաղաղ պատանին և իր մոտ վերցրեց Տարասին, իբրև սենեկապետ ջահել կազակի: Տղան ամբողջ որը դեռ ու գեներ էր վազում՝ հանձնարարու-

Թյուններ կատարելու կամ թե անշարժ նըստած եր լինում նախասենյակում:

Ձեռին վոչ մատիտ կար, վոչ թուղթ: Անասելի թախիծ:

Վերջապես նրան հաջողվեց մի թերթ թուղթ ու մի մատիտ թոցնել գրասենյակային ծառայողի մոտից: Կալվածատեր Ենգելզարդտը գնացել եր պարահանդես: Նկարի, վո'րքան քեֆը կտա: Սակայն այդ միջոցին ել բանը թարսվեց. պատանին այնպես եր տարվել իր սիրած գործով, վոր կորցրել եր ամեն պատկերացում ժամանակի մասին: Բարինը նրան տեսավ նկարի վրա խոնարհված, կողքին վառ մոմեր: Նա սաստիկ զայրացավ — այդպես հո կարելի չե ամբողջ տո'ւնն այրել, — և հրամայեց, վոր Տարասին մի լա'վ ծեծեն ախոռատանը:

Այսպես անցավ մի քանի ամիս: Ենգելզարդտը մեկնեց Պետերբուրգ և իր հետ վերցրեց փոքրիկ կաղակ Տարասին: Այդ կալվածատիրոջ խելքին փչեց Տարասին նկարիչ դարձնել: Չե' վոր տնտեսության մեջ նկարիչը միշտ ել պետք կգա. նա կնախշի աղայական տան պատերն ու առաստաղը, նա կնկարի իր տիրոջ սիրուհիների պորտրեները...

Յեվ Ենգելզարդտը Տարասին տվեց նըկարիչ Շիրյայեվի մոտ ուսման:

Շեվչենկոն մյուս աշակերտների հետ միասին տեղավորվեց տան չարդախում, ուր



Շեվչենկոյի ինքնանկարը

1845 թ.

մութն եր և ցուրտ: Յերեկով նա աշխատում
էր ներկարարի վրձինը ձեռին, իսկ գիշեր
ժամանակ մոմերի մնացորդները վառելով
կարգում եր: Իսկ յերբ սպիտակ գիշերներէ
չըջանը յեկավ, նա սկսեց ամառային այգի
վազել, այնտեղի արձանները նկարելու:

Այդ ժամանակ նա չատ վատ կյանք եր
վարում: Շիրյայեվը բիրտ եր ու դաժան և
չեր ուզում— ասենք՝ չեր ել կարող— նկար-
չություն սովորեցնել նրան: Բարեբախտա-
բար չուտով Շեվչենկոն ծանոթացավ մի մար-
դու հետ, վորը չուռ տվեց նրա ամբողջ
կյանքը: Դա իր հայրենակիցն եր, նկարիչ
Սոչենկոն:

Հետագայում Սոչենկոն այսպես եր պատ-
մում իր հիշողությունները:

«Յերբ յես «գիպսե գլուխներում» եյի,
կամ թե՛ «Փիգուրաներում»*), չեմ հիշում՝
1835 թվին եր, թե 1836—ին, ինձ հետմիտին
ակադեմիա եր գալիս Շիրյայեվի աներձագը:
Նրանից յես իմացա, վոր իր վեսայի մոտ

*) Նկարիչը պատկերավոր և տալիս իր հիշողու-
թյունները— «Когда я был в гипсовых головах» или
«в фигурах» այնպես պիտի հասկանալ, վոր նա այդ
տարիներին յեղել և կամ «головной класс»-ում, ուր
սովորողները բացառապես զբաղվում էին գիպսե
գլուխներ նկարելով, կամ թե «фигурный класс»-ում:

վորպես տղա—աշակերտ գտնվում ե իմ հայ-
րենակից Շեվչենկոն, վորի մասին յես վորոշ
բան լսել եյի դեռևս Ուլանայում, իմ առաջին
ուսուցչի մոտ ապրելիս... Յես թախանձագին
խնդրեցի Շիրյայեվի բարեկամին ինձ մոտ՝
բնակարան ուղարկել հայրենակցիս: Տեղեկա-
նալով իր հետ ծանոթանալու իմ ցանկության
մասին, Տարասը մյուս ուրը ևեթ, կիրակի,
գտել եր իմ բնակարանը վասիլևսկիյ կղզու
Կ—րդ գծի վրա և ներս մտալ այսպիսի արտա-
քինով. հագել եր խտակտալ ձեթոտ խալաթ.
գեղջկական հաստ քաթանից կարած չապիկն
ու անդրավարտիքը կեղտոտվել էին ներկե-
րից: Վոտարորիկ եր ու գլխաբաց: Ամաչկոս
տղա յեր, դեմքը խոժոռ:

Առաջին իսկ որից յես նրանում նկատեցի
նկարչություն սովորելու սաստիկ փափագ:
Նա սկսեց հաճախակի գալ ինձ մոտ, բաց
չթողնելով վոչ մի տոն ուր: Այդպիսի այցե-
լությունների ժամանակ Տարասը մեկ մեկ
վորոշ գեպքեր եր պատմում իր անցյալից...»

Սոչենկոն Տարաս Գրիգորեիչին իր հետ
առնում և Պետերբուրգի հայտնի նկարիչների
և գրականագետների շրջանը: Նա Շեվչենկո-
յին ծանոթացնում և խոչորագույն ուսանալի
նկարիչների՝ Կարլ Բրյուլլովի, Վենեցիանո-
վի, Նշանավոր բանաստեղծ Ժուկովսկու, ուկ-
րաինական գրող Գրեբենկայի և ուրիշների
հետ:

Է9-65019



Շեմշենիկոն այդ ժամանակ պորտրեններ եր
նկարում բնականից, սակայն միաժամանակ
և աշխատում եր Շիրյայեվի մոտ վորպես
ներկարար. դռներ, պատուհաններ ու ցանկա-
սլատեր եր ներկում: Կյանքում ամենից շատ
փափագում եր մի բան՝ ընկնել Արվեստ-
ների ակադեմիա, բայց ճորտերին այնտեղ
չեյին թողնում: Ուրեմն, ինչ գնով ել վոր
լինի պետք ե ազատվել ճորտային ստրկու-
թյունից, այլապես Ակադեմիան ընդմիջտ
փակ ե լինելու իր համար: Մինչև դերեզման
պետք ե մնա վորպես պատուհաններ, ցան-
կապատեր ու դռներ ներկող:

Քանի Շեմշենիկոն ավելի յեր մտերմանում
էրթված մարդկանց հետ, այնքան ծանրանում
եր նրա հոգեկանը:

Սակայն այդ չըջանում մի մեծ դեպք տե-
ղի ուենցավ նրա կյանքում, այնպիսին,
վորի մասին նա չեր ել համարձակվում յե-
րազել:

Սոչենիկոն բանաստեղծ Ժուկովսկուն
պատմեց Շեմշենիկոյի տանջանքների մասին:
Ժուկովսկին բարի և սրտացավ մարդ եր: Սո-
չենիկոյի պատմածը հուզեց նրան և նա վճռեց
ոգնել ջահել նկարչին: Բրյուլլով և Վենեցիա-
նով նշանավոր նկարիչները նույնպես մասն
ունեցան Շեմշենիկոյի վիճակը բարելավելու
գործում:

Նրանք մի քանի անգամ դիմեցին Ենգել-


պարգտին, խնդրելով ազատման թուղթ տալ
Շեմշենիկոյին: Սակայն Ենգելպարգտն անո-
ղոք եր:

— Յերկու հազար հինգ հարյուր ուրբլի
— ահա իմ ասած վերջնական դինը, — պա-
տասխանում եր նա Շեմշենիկոյի հովանավոր-
ներին:

Այն ժամանակ Բրյուլլովը և Ժուկովսկին
մի յեղք դտան, թե ինչպես ձեռք բերեն այդ
գումարը: Նրանք վճռեցին, վոր Բրյուլլովը
կնկարի Ժուկովսկու պորտրեն, այդ պորտրեն
ներանք վիճակախաղի կզենեն և ձեռք բերված
գերամով ճորտությունից կազատեն Շեմշենիկո-
յին:

Բրյուլլովը հոյակապ պորտրե նկարեց:
Վիճակախաղը հայտարարվեց և իսկույն ևեթ
վաճառվեցին բոլոր տոմսերը: 1838 թվի ապ-
րիլի 22-ին տեղի ունեցավ վիճակախաղը:

Յեմ նույն օրն ևեթ կալվածատեր Ենգել-
պարգտը, ստանալով յերկու հազար հինգ
հարյուր ուրբլին, ստորագրեց իր ճորտ Տա-
րաս Շեմշենիկոյի ազատման թուղթը:



Նկ. Շեվչենկոյի

II

Այն տարիներին, յերբ ծնվեց ու ապրեց Տարաս Գրիգորեվիչ Շեվչենկոն, վողջ բաղամամիլիոն գյուղացիութիւնը նիկոլայեվյան Ռուսաստանի անծայրածիր տարածութեան վրա գտնվում էր ճորտական ծանր ու սոսկալի կալված վիճակում, չլթայված էր ստորկութեան կապանքներով:

Կալվածատերերը գյուղացիներին տանջում—չարչարում էին ամենատարբեր յեղանակներով:

Մարդկանց միջև վող մի խտրութիւն չէին դնում. ծեր, ջահել, կին ու յերեխա,— բոլորին էլ յենթարկում էին տանջանքների:

«Աստված ինքը տարբեր է ստեղծել տե-

րերին և ծառաներին», — ասում էյին կալվածատերերը և իրենց ծառաների հետ վարվում էյին այնպես, ինչպես քեֆները տալիս են:

«Կալվածատերը թագավորի ամենահուսալի պատվարն է, — գրել է ցարական ռաբանկայի պետ Դուբելար Նիկոլայ I ցարին: Վոչ մի զորք չի կարող փոխարինել այն աշայրջութեանը, այն ազդեցութեանը, վոր կալվածատերն ամեն բոսկի ունի իր կալվածքում: Վոչնչացրու այդ իշխանութիւնը — ժողովուրդը կուրծք կտա ու կհորդի ժամանակին նաե ի՛ր իսկ ցարի դեմ, ինչպես այդ քանիցս յեղել է ոտար յերկրներում: Կալվածատերն ամենահավատարիմ, արթուն մի շուն է, վոր պաշտպանում է պետութիւնը. նա ի բնէ վոստիկան է, վորին սովորութիւն աղաթը և հնազույն ավանդութիւններն այնքան մեծ իշխանութիւն են տալիս, վոր դատասպետական է թվում Յեվրոպայի արեմուտքում»:

Յարական, կալվածատիրական Ռուսաստանը վախենում էր գյուղացիական ապստամբութիւններից: Դաժանաբար դատաստան տեսնելով դեկարբիստների գլխին 1825 թվին, ցարական իշխանութիւնն էլ ամբիլի կտրուկ էր պատժում բունտարար գյուղացիներին...

Հերցենը այսպես էր անվանում ցարական Ռուսաստանը «մշուշի, կամայականութեան, անտրտուն յառջելու, անհետ կործանման,

բերանը թաշկինակ խցելով տանջելու թագա-
վորութիւն»:

Այդ տարիներին վողջ յերկիրը մի բանս
էր աշխատավորների համար:

Սակայն վորքան ել խիստ լինեյին պա-
տիժները, վորքան ել մեծ լինէր իշխանու-
թյան կամայականութիւնը, այնուամենայ-
նիվ, նրանց չհաջողվեց կասեցնել հեղափո-
խական շարժումը:

Ազատութիւն ստանալով, Շեվչենկոն
մտաւ Արվեստների ակադեմիան:

Նա ապրում էր Սոչենկո նկարչի տանը,
իսկ Ակադեմիայում աշխատում էր Բրյուլ-
լովի դեկավարութեամբ:

Նա կանոնավոր հաճախում էր բոլոր դա-
սախոսութիւնները՝ նկարչութեան տեսու-
թյան վերաբերյալ, ուսումնասիրում Փրանսե-
րեն լեզուն, շատ էր կարդում ու նկարում:

Բրյուլլովը Շեվչենկոյին տանում էր
Երմիտաժ, ման ածում թանգարանի դահլիճ-
ներում և մանրամասն ու շատ պատմում էր
արվեստի մեծ վարպետների մասին:

«Դրանք փայլուն դասախոսութիւններ
էին նկարչութեան տեսութեան բնագաւա-
րից», — հիշում էր Շեվչենկոն հետագայում:

Շեվչենկոն սիրում էր Բրյուլլովին և ըս-
կըզբում գտնվում էր նրա ազդեցութեան տակ:
Բրյուլլովը պնդում էր՝ «սովորեցեք նկար-
չութեան կրօնականից» և Շեվչենկոն յենթարկ-



Նկ. Շեվչենկոյի

վում եր իր ուսուցչին— նա կլասիկ որինակ-
ների վոգով շատ նկարներ արավ՝ կատարման
յեղանակով յեռանդադին նմանեցնելով Բը-
բյուլլովին:

Բրյուլլովը Շեվչենկոյի վոչ միայն ուսու-
ցիչն եր, այլ և բարեկամը: Նա Շեվչենկոյի
առջև բացեց իր հարուստ գրադարանը: Նա իր
սանին ծանոթացրեց շատ նկարիչների ու գրա-
կանագետների հետ: Նա միշտ գործվանքով
եր վերարերվում Շեվչենկոյին և սիրալիբ
ընդունելություն եր ցույց տալիս նրան:

Ծանր, չարքաշ կյանքից հետո— Պետեր-
բուրգյան հարուստների և չինոյնիկներ
որտաբաց աները, թանգարաններ, թատրոն,
յերաժշտություն, աշխարհիկ զվարճություն-
ներ, պարահանդեսներ... Կարող եր դիտա-
պառլյա առաջանալ:

Սակայն Շեվչենկոն կայուն եր:

Յարական վիթխարի ու հարուստ այս
մայրաքաղաքում յերջանիկ ազատագրումից
հետո, նա առանձնապես խիստ դժաց իր շուրջը
տիրող կամայականության մեծագույն սար-
սափը, աշխատավոր ժողովրդի անծայր ցափն
ու դարդը և անպաշտպան վիճակը:

Վո՛չ հուշակված ոռւս նկարչի հոյակապ
արհեստանոցում, վո՛չ Ակադեմիայի ղաճլիճ-
ներում, վո՛չ ել յերեկույթներին ու պարա-
հանդեսներին, ուր նրան ընդունում եյին վոր-

պես մի արտասովոր անձնավորության, — նա
յեր մոռանում իր տանջվող հայրենիքը:

Պետերբուրգյան կյանքի շքեղության և
ազմուկի մեջ նրա առջև դունեց պատկերնե-
րով յերեւում եյին իր դժվարին մանկության
որերը:

Ահա այդ ժամանակ առաջին անգամ յե-
րեւան յեկավ այն, վոր նա վոչ միայն նկարիչ
ե, այլև պոետ: Նա սկսեց բանաստեղծու-
թյուններ գրել իր մայրենի լեզվով և այդ տո-
ղերը տխուր եյին, վորովհետեւ նրանցում ար-
տակարգ ուժով յերեաց ժողովրդական վիշ-
տը:

Տարիներ հետո, աքսորանլայրում նա հի-
շեց այդ ժամանակ և իր որատեարում գրեց.

«... Անտաշ մութիկ-ներկարարի արագ
անցը չարգախից դեպի հոյակապ արհեստա-
նոցը մեր դարի խոչորագույն նկարչի: Հիմա
դա ինձ ել անհավատալի յե թվում, այնինչ
իրոք այդպես ե յեղել: Յես — կեղտոտ չար-
դախից, յես — շնչին մոխրատիտիկ — թե
առած թոռ Արվեստների ակադեմիայի կա-
խարդական դահլիճները: Սակայն ինչո՞վ եմ
պարծենում: Ինչո՞վ յես ապացուցեցի, վոր
ողտվել եմ աշխարհիս խոչորագույն նկարչի
խրատներից և բարեկամական մատահությու-
նից: Բնավ վոչնչով... Յես ինչո՞վ եմ գրադ-
վել այդ սրբավայրում: Տարորինակ և մտա-
ծել: Այն ժամանակ յես գրադվում եյի մալո-

րոսսական բանաստեղծություններ գրելով, վորոնք հետագայում այնպիսի մի սոսկալի ծանրությամբ ընկան իմ թշվառ հոգու վրա: Նրա հիասթափանչ քաթանների առջև յես մտածմունքի մեջ եյի ընկնում և սրտումս փայփայում եյի իմ կույր-կորզարին և արյունոտ հայդամակներին*): Նրա չքեղ ու փաթթած արհեստանոցի սովերում, ինչպես Վերին-դնեպրյան արևատուօր վայրի տափաստանում, իմ աչքերի առաջ թեթևակի յերեվում եյին մեր խեղճ գետմանները**): Նահատակ ըստ-վերները: Իմ առջև փռված եր տափաստանը, կուրգաններով***): ծածկված: Իմ առջև չող-չողում եր իմ գեղատեսիլ, իմ թշվառ Ուկրաինան իր վողջ անբիծ, մեղամաղձոտ գեղեցկությամբ... Յեվ յես մտածմունքի մեջ եյի ընկնում, յես չեյի կարողանում իմ հոգեկան աչքերը հեռացնել այդ հարազատ, դյուրթող

սքանչելիքից: Դա իմ կոչումն եր և վոչինչ սովերին...»

1838 թվին—հենց այն տարին, յերբ Շեվչենկոն ազատվեց ճորտությունից և մտավ Ակադեմիա, — նա շատ բանաստեղծություններ գրեց. «Причина», («Ревет и стопет Душпширокий»), «Ветер буйный», «Думка» և հոյակապ մի պոեմ՝ «Катерина».

Հենց այդ ժամանակ եր, վոր նա սկսեց գրել մի մեծ հերոսապոեմ — «Гайдамаки».

Իր բանաստեղծությունները Շեվչենկոն վոչ վորից ցույց չեր տալիս: Նա շատ բանաստեղծություններ եր գրում, սակայն լուրջ նշանակություն չեր տալիս դրանց: Նա շատ համեստ եր: Նրա վաղ չրջանի բանաստեղծություններից շատերը մեզ չեն հասել:

Առաջին մարդը, վորին Շեվչենկոն համարձակվեց ցույց տալ իր բանաստեղծությունները, ուկրաինական գրող Յեվգենիյ Գրեբենկան եր: Գրեբենկան կալվածատեր եր: Նա միանգամայն այլ կերպ եր պատկերացնում ուկրաինական կյանքը, քան Շեվչենկոն և ամենավարդապույն յերանգներով եր այն նկարագրում: Սակայն վորպես գրող նա չեր կարող չգնահատել Շեվչենկոյի բանաստեղծությունների պոետիկ պարզությունը, թարմությունն ու թովչությունը: Նա Շեվչենկոյին խորհուրդ տվեց հրատարակել այդ սքան-

*) 18-րդ դարում ուկրաինական ըմբոստ տարեր, առավելապես դյուդացիներէց, վորոնք Դնեպրի աջ-ափնյա վայրերում ապստամբություններ բարձրացրին ընդդէմ լեհ աղնվականության: Ծ. Թ.

**) Ուկրաինայում կաղսկական դորքի ընտրովի հրամանատարներ, վորոնք միաժամանակ վարում եյին ուղղական և քաղաքացիական պաշտոններ:

***) Թմբեր՝ հնադարյան գերեզմանների վրա: Հայտնի են սկյութական կուրգանները Ռուսաստանի հարավում: Ծ. Թ.



Շեվչենկոյի ինքնանկարը

1843 թ.

չեղի տողերը: Սակայն Շեվչենկոն պատաս-
խանեց. «Զարթե!»:

1839 թվին Շեվչենկոն շատ նոր բանաս-
տեղծություններ գրեց. «Тополь», «Перебендя»,
խորին թախիծով համակված տողեր՝ «Думы
мои, думы», վորոնք յուրատեսակ պոետիկ նե-
րածություն են բանաստեղծի վաղ շրջանի
վողջ ստեղծագործության համար:

Գրերենիկան համառորեն պնդում, համո-
զում էր Շեվչենկոյին՝ հրատարակել իր
բանաստեղծությունները: Յեվ Շեվչենկոն
վերջ ի վերջո համաձայնեց:

Շեվչենկոյի բանաստեղծությունների ա-
ռաջին ժողովածուն ապովեց 1840 թվին «Кобзарь»
անունով:

Շեվչենկոն այսպես մտավ գրականու-
թյուն:

Յեվ նույն այդ տարին նա արժաթե մե-
դալ ստացավ Ակադեմիայից՝ նկարչության
մեջ ցուցաբերած առաջադիմության համար:

«Ուկրաինական խիստ մուսան, — գրում
էր Շեվչենկոն, — յերկար ժամանակ խորթ էր
իմ ճաշակին, վորին կյանքը խեղաթյուրել էր
դպրոցում, կալվածատիրական տան նախա-
տենյակում և քաղաքի բնակարաններում:
Բայց յերբ ազատության նախազգացումն
իմ զգացմունքերին վերադարձրեց մանկու-
թյան առաջին տարիների հստակությունը,
մանկություն, վոր անցել էր հորս խղճուկ

ծղոտակտրի տակ, — նա՛ շնորհակալ եմ՝
չրկեց ու փայփայեց ինձ ոտար վայրում...»

Շեվչենկոյի ուկրաինական բանաստեղ-
ծությունների առաջին գիրքը լայն արձագանք
ունեցավ. Ուկրաինայում խանդավառությամբ
ու արցունքներով ընդունեցին այն:

Բոլորը ջերմորեն վողջունում էին իրենց
հարազատ պոետին:

Այն ժամանակվա ուկրաինական գրակա-
նության կորիֆեյներից մեկը՝ Կվիտկա-Ուս-
նովյանենկոն Շեվչենկոյին գրած նամակում
այսպես եր նկարագրում այն տալամորու-
թյունը, վոր ընթերցողների վրա թողել եր
«Կորզարի» առաջին հրատարակությունը.

«... Սկսեցինք կարգալ... Կինո լալիս
ե... Յես սրտիս սեղմեցի ձեր գիրքը: Լավ ե,
չա՛տ լավ: Ավելին չեմ կարող ասել...»

Սակայն գրականագետներից վոմանք
խիստ նախատինքներով դիմավորեցին «Կոր-
զար»-ի լույս տեսնելը: Նրանք դատապար-
տում էին ժողովածուի լեզուն, Շեվչենկոյին
անվանում «մուժիկական պոետ»:

1841 թվին առանձին հրատարակությամբ
լույս տեսավ Շեվչենկոյի «Հայդամակներ»
հերոսապոեմը: Այս պոեմում Շեվչենկոն տվել
ե լեհական չլյախտայի դեմ բռնկած գյուղա-
ցիական ապստամբության հզոր պատկերը:
Հայդամակների պատկերներում պոետը ցույց
ե տվել ուժեղ, քաջարի մարդկանց, վորոնք

պայքարում են հանուն իրենց հայրենիքի ա-
զատության՝ լեհական պաների լծից:

Գետք ե ասել, վոր «Հայդամակներ»
մեջ Շեվչենկոն չի բացահայտու՞մ կազակա-
կան «ավազի» իսկական եյությունը, իդեա-
լականացնում ե Գոնտային և Ժեկեղնյակին,
պատվազուրկ չի անում ուկրաինական կալ-
վածատերերին և տերտերներին, վորոնք փոր-
ձել են ազդային թշնամանքն ոգտագործել ի-
րենց դասակարգային նպատակների համար:
Սակայն այդ պոեմը գրված ե դեռևս ա՛յն
ժամանակ, յերբ Շեվչենկոն լիովին չեր
հասկանում ամեն տեսակ պանության (այդ
թվում և ուկրաինական) իսկական բնույթն ու
դասակարգային եյությունը: Այդ պոեմի վրա
աշխատելիս Շեվչենկոն հիմնվում եր հնորյա
ավանդությունների, լեզենդների և ժողովրդ-
դական յերգերի վրա, վոր նա լսել եր գըլ-
խավորապես մանկության և պատանեկու-
թյան տարիներին:

«Հայդամակներ» պոեմը հատարակա-
կան մեծ դեր խաղաց Ուկրաինայում:

Հենց այդ ժամանակ եր, վոր այնտեղ
գյուղացիական ապստամբություններ ելին
տեղի ունենում:

Կիևի նահանգապետը հետևյալն եր գրում
ռազմական մինիստրին.

«Թեպետ իմ ձեռք առած միջոցների շնոր-
հիվ արդեն խաղաղություն ե մտցված գա-

վառները մեծ մասում, ուր թյուրիմացություններ եյին յերևայել, սակայն կանելի և նրան հարեան մի քանի դավառներում, ուր դեռ կատարելապես չի հանգել հիշողությունը կազակության մասին, գյուղացիները շարունակում են համարել»:

Այդպիսի մի «Հիշողություն կազակության մասին» եր և «Հայդամակներ» պոեմը: Շորտացված գյուղացիության մեջ այդ գիրքը հնչեց վորպես ապստամբության կոչ:

Հետագայում, 1861 թվին, ազնվականները գրել են Կիևի նահանգապետին.

«Ժողովուրդը, հանձինս նրանց (այսինքն «Հայդամակներ» պոեմի հերոսների), տեսնելով բացառապես միայն վրիժառության, ջարդի, արյունահեղության նկարագրությունը, գրգռվում և կրկնելու այնքան փառաբանված այդ գործերը»:

Լավ չպատկերացնելով այդ պոեմը տալելու բոլոր հեռանքները, ցարական ցենզուրան թույլ տվեց տպագրել այն, սակայն անշափ շատ «աշխատանք թափեց» նրա վրա:

«Ի՞նչ հալ քաշեցի դրանց ձեռից» — պատմում եր Շելլենկոն, — ցենզուրական կոմիտեն զոռով բաց թողեց գիրքս: «Վրդովեցուցիչ է, դե իհարկե...»

1840-1843 թվերին նա գրել է «Думка» («Тяжко, тяжело жить на свете...», «Чели», մի մեծ պոեմ՝ «Марьяна-черница», նվիրված Ուսանա Կովալեն-

կոյին — մի ճորտ աղջկա, Շելլենկոյի մանկության ընկերուհուն (պոեմը այդպես էլ կիսատ մնաց), «Утопленница» ոռմանտիկ բալլադան, «Գամալիա» պոեմը և այլ շատ բանաստեղծություններ:

«Ինձ ենտուզիստա են անվանում, այսինքն՝ հիմար, — թող ասեն, ինչ անենք, — գրում եր Շելլենկոն 1843 թվին Տարնովսկուն: — Թող յես «մութիկական պոեա» լինեմ, միայն թե՛ պոեա, այլևին ինձ չեմք ել չե...»

Սակայն պոեզիայով տարված Շելլենկոն նորից չի թողնում և նկարչութունը: Այդ իսկ տարիներին նա նկարում է «Կատերինա» պատկերը և մի քանի պորտրետներ, նկարագործում է գրքեր և կենցաղային շատ ուրվանկարներ և անում:

Իր աշխատանքների համար նա յերկրորդ արծաթե մեդալն է ստանում Ակադեմիայից:

1843 թվի ամառվա վերջին նա ուղեվորվեց հայրենիք, այցելեց Կիրիլովկա գյուղը, հանդիպեց իր մերձավորներին՝ հեռ, հեռու յեղավ Ուկրաինայի շատ վայրերում և այնտեղ ծանոթացավ ուկրաինական յերիտասարդ ինտելիգենցիային:

Ուկրաինայում նա ճանաչեց Պանտելեյմոն Կուլիչին, բեղմնավոր ու բազմակողմանի ձիրքերով ոժտված ուկրաինական այդ գրականագետին, ծանոթացավ Ռեպինի ընտանիքի

հետ և մտերմացաւ իշխան Ռեպինի աղջկա—
լիբերալ և մարդասեր Վարվարա Նիկոլայեւի—
նայի հետ:

Ահագին քանակութեամբ նկարներ, վոր
արտացոլում էին Ուկրաինայի կյանքը, շատ
պորտրետներ և լիբիքական բանաստեղծու—
թյուններ— այս եր նրա ուղեորութեան
արդյունքը:

Ճանապարհորդութեան ժամանակ Շեվ—
չենկոն իր հայրենիքում տեսաւ ելի նույն
ձեւումը, ելի նույն շահագործումը:

Ամեն կողմից նրան պատմում էին կյան—
քի սարսափների մասին: Մի կալվածատեր
ծեծելով մահվան դուռն եր հասցրել մի քանի
ճորտ գյուղացիների սոսկ այն պատճառով,
վոր սրանք այնպես հարգանքով վորտի չէին
կանգնել իր առաջ հարբած վիճակում. մի
ուրիշ կալվածատեր բաժանել եր ընտանիքի
տնդամներին, գյուղացու աղջիկներին փոխե—
լով ազնւարքուն շների հետ. յերրորդը խել
եր մի պառավ կնոջ յերկու վորդիներին, զին—
վոր ուղարկել նրանց, հիվանդ մորը թող—
նելով մենակ, առանց վորեւե նեցուկի:

Շեվչենկոյի համար անասելի ծանր եր
տեսնել, թե ինչպես ե նահատակվում իր
ճորտացված հայրենիքը:

«Անցյալ տարի յեղա Ուկրաինայում,—
մի տարի անց նա գրում եր Յակով Կուխա—

յենկոյին:— Ամեն տեղ ել յեղա—և բոլորը
լալիս էին. ալեքե՛լ են մեր Ուկրաինան...»

1844 թվին Շեվչենկոն վերադարձաւ Պե—
տերբուրգ:

Ճամբին— Մոսկվայում նա ծանոթացաւ
առաջին անգամ Շչեպկինի հետ:

Շչեպկինը ճորտ գյուղացու վորդի յեր ե
ինքն ել ճորտ եր մինչև յերեսուն յերեք տա—
րեկան հասակը:

«Նրա արվեստի հաղթանակը,— դրել ե
Ֆելիքսին,— միայն նրանում չե, վոր նա
կարող ե բեմի վրա միեւնոյն ժամանակ հա—
րուցել և՛ ծիծաղ և՛ արցունքներ, այլ նրա—
նում, վոր նա կարողանում ե դիտողներին
հետաքրքրել հասարակ մարդու վիճակով և
նրանց հարկադրել բուռն լաց լինել և սարսը—
ռալ— տեսնելով վորեւե նավաստու տանջանք—
ները, ինչպես Մոչալովն ե հարկադրում նր—
բանց լաց լինել և սարսռալ— իշխան Համլե—
տի կամ զորավար Ոթելլոյի տանջանքները
տեսնելով...»

Մոսկվայում սկսվում ե Շեվչենկոյի ու
Շչեպկինի բարեկամութիւնը, վոր հարատե—
լից նրանց կենդանութեան բոլոր ժամանակ:
Նրանք հոգով մոտ մարդիկ էին:

Շեվչենկոյի բանաստեղծութիւնները
նույնպես հարկադրում էին ընթերցողին
«լաց լինել և սարսռալ, տեսնելով հասարակ
մարդկաց տանջանքները», վորովհետեւ պոետն

աշխատավորների մասին գրել է ինչպես իջ-
հարազատների մասին,— սիրով, հարգանքով
և սրտի թրթիռով:

Պետերբուրգ վերադառնալուց հետո Շել-
լենկոն մտերմացավ Պետրաշևսկու հեղափո-
խական խմբակի անդամներին հետ. դրանք ա-
ռաջին ոռու սոցիալիստ-ուսուպիստներն էին:

Նրանց հայացքները հասկանալի և մոտ
էին Շելլենկոյին և նա, անկասկած, համա-
կարծիք եր նրանց:

Պետերբուրգում նա գրադվեց «Живописная
Украина» ակումբի հրատարակությամբ, վորի
համար ինքը վորպես նկարիչ կատարեց մի
շարք ոֆորտներ:

1844 թվի մայիսին նա գրեց իր հայանի
«Сова» բանաստեղծությունը, նվիրված ժո-
ղովրդական վշտի պատկերացմանը, մի վիշտ,
վոր առաջացել եր նիկոլայեվյան վոչ մարդ-
կային սալգաթայնությունից:

Իսկ հուլիսին նա կերտեց «Сон» սուր քա-
ղաքական յերգիծանք-սրամֆրետը, վոր ամ-
բողջովին համակված եր զայրույթով և դե-
պի ցարական իրավակարգն ու կալվածատե-
րերը տաժաժ ատելությամբ:

«Сон» պոեման գրված է ճորտ գյուղա-
ջու բերանով, վոր յերագում է աշխատավոր-
ների ազատագրումը ստրկության շղթաներից
և բովանդակում է խարազանոց քննադատու-
թյունն ճորտատիրական իրավակարգի և միա-

պետական ռեժիմի նկատմամբ: Պոետն այս-
տեղ յերգիծանքով է պատկերել «ցար-բա-
սյուշկա» Նիկոլայ I, իրեն թագուհուն, նը-
րանց մերձավորներին, ցարական ամբողջ
արքունիքը:

Այստեղ, ի հակակշիռ շատ ուկրաինական
գրողների (Գրեբենկայի և ուր.), վորոնք
ուկրաինական գյուղը պատկերել են վորպես
«յերկրային դրախտ», Շելլենկոն միանգա-
մայն այլ, ուստի, ճշմարտությամբ լի պատ-
կերն է տալիս ճորտային կենցաղի:

Քանի գնում այնքան կտրուկ է դառնում
երա քննադատությունն իր ուկրաինական հայ-
քենակիցներին—պան-լիրերալներին նկատմամբ:

«Գոռում, խաչ է բարձրանում հանուն
նոր պաղապարների, հանուն քաղաքակրթու-
թյան, հանուն մարդկության, իսկ ինքը...»
գեղջուկներին ճգմիչի տակ և գնում ճակնդե-
ղի հետ միասին*), — գրել է Շելլենկոն
«Прогук» վիպակում, բնութագրելով լիրերալ
կալվածատերերից մեկին:

«Կարելի չէ, թե դա նրանց «նրբագագ»
բնավորության համար իրոք վոր շատ գեղե-
ցիկ է, բայց մեր գեղջկական աչքերի համար
զա անասելի գարշելի չէ», — գրել է նա շատ
ուկրաինական գրողների յերկերի մասին, վո-

*) Յիտաա Դենիս Դավիդովի բանաստեղծու-
թյունից:



Կատերինա

Նկ. Շեվչենկոյի:

րոնք խեղաթյուրում են Ուկրաինական ծանր իրականությունը և ճորտական գյուղի կյանքը պատկերացնում վորպես մի «գրախա յերկրիս վրա»:

1845 թվի սկզբին Շեվչենկոն ավարտեց Արվեստների ակադեմիան և վերադարձավ մեկնեց Ուկրաինա:

Նա յեղավ շատ վայրերում: Յեղավ Կիև-վում, Միրգուրոգում, Յագոտինում, Ռոմ-նիում, Մարչինսկոյե գյուղում, Վյունիչչա գյուղում և Պերեյասլավում:

Հայրենի յերկրում ճանապարհորդելիս Շեվչենկոն գրեց մի քանի մեծ պոեմներ և շատ բանաստեղծություններ:

Այդ տարին գրած իր վորոշ յերկերում նա վերադարձնում է Ուկրաինայի պատմական անցյալին («Невольник» «Подземелье» և ուր.), սակայն վորպես տարբերում վաղ չրջանի յերկերից, նա այլևս չի իդեալակա-նացնում անցյալը: Այդ յերկերում քանի գը-նում այնքան բարձր են լսվում ժողովրդական մասսաների կոչը՝ ապստամբել ընդդեմ Նի-կոլայեվյան կայսրության տաժանակրական ճնշման: «Подземелье» պոեմում Շեվչենկոն հույս է հայտնում, թե մոտ է ճորտացված գյուղացու հաշվեհարդարի ժամը պաների հետ և վոր գյուղացիական նոր ապստամբությունը մահապատժի կենթարկի դահիճ-կալվածատեր պաներին:

Այդ շրջանում Շեվչենկոյի ստեղծագործած բոլոր յերկերի մեջ առանձնապես աչքի չեն ընկնում նրա «Кавказ» զորեղ պոեման։ Դա ցարական Ռուսաստանի՝ ժողովուրդների բանտի պատկերն է։

Մոլդավացուց մինչ փինը

Լուռ ե ամեն ինչ բոլոր լեզուներով։

Բարձր դասն ե ասպրում յերջանիկ...

Հեղինարար ասում ե պոետը։

«Кавказ» պոեմում բանաստեղծը հասնում ե մինչև համաժողովրդական դադափարները, մինչև ինտերնացիոնալիզմը։ Նա նույնքան մոտ ե ընդունում իր սրտին ստրկացված կովկասցիների ե Ռուսաստանի կայսրության կազմի մեջ մանող այլ ժողովուրդների տանջանքները, վսրջան ե ուկրաինացիներինը։

Նույն այդ տարին Պերեյասլավում, ծանր հիվանդ վիճակում, պոետը գրեց իր «Завещание»-ն («Как умру—похороните на Украине милой...» — «Յերբ մեռնեմ—ինձ թաղեք անուշ Ուկրաինայում...»)

Թաղե՛ք ու վոսի կանգնե՛ք,

Կապանքները կտքեցե՛ք

Յե՛վ քշնալու տա՛ք արյունով

Ազատաբյունը ցոլեցե՛ք։

Բացականչում ե պոետը։

Այս խոսքերը հնչում եյին վորպես ապրտամբության անմիջական կոչ։

1846 թվին Շեվչենկոն առավելապես ապրում ե Կիևում։ Նա աշխատում ե հնագիտական հանձնաժողովում, բազմաթիվ նկարներ ե անում, լսում ե կորզարներ յերգերը։

Կիևում նա ծանոթանում ե ուկրաինական յերիտասարդ գիտնական Ն. Ի. Կոստոմարովի հետ։ Կոստոմարովը խոսում եր ռեֆորմների անհրաժեշտության մասին, հիանում եր Շեվչենկոյի բանաստեղծություններով։ Շուտով նրանք բարեկամացան։

Կիևում Շեվչենկոյի առջև առաջվա պես լայնորեն բաց եյին արիտոտկրատական տների դռները։ Առաջվա պես հարուստ ե անվանի մարզիկ գովարանում եյին նրա բանաստեղծությունները։ Սակայն Շեվչենկոն ավելի սիրով մոտ բարեկամություն եր հաստատում ծորած դյուլդացիների հետ։ Սրանք միշտ անհամբերությամբ եյին սպասում նրան, աշխատավոր մարդկանց շրջանում նա մոտիկ, հաբադատ մարդ եր։

Կոստոմարովը Շեվչենկոյին ծանոթացրեց իր ընկերների ու համախոհների հետ ե նրան մտցրեց Կիրիլ-Մեֆոդյան յեղբայրության մեջ— մի դադանի ընկերություն, վորը նպատակ եր դրել բոլոր սլավոնական ժողովրդներին համախմբել մի ֆեդերացիայի մեջ։

Այս ընկերության պլանները մշուշոտ քննույթ ունեյին։ Մինչև իսկ ինքը՝ զրա հիմ-

նադիր Կոստոմարովը պարզ և վորոշ չէր պատկերացնում, թե ինչպիսին պիտի լինի այդ պետութիւնների Փեղերացիան։ Նրա ծրարագրի միակ արժեքավոր կետերն էին. ճորտատիրական իրավունքի վերացումը և դրագիտութեան կազմակերպված տարածումը ժողովրդի մեջ։


Ակներև է, վոր հենց այս կետերն են դրավել ջահել Շեվչենկոյին։ Ուկրաինական սոցալանականներից կազմված այս ընկերութեան ջանքերը նա դիտում էր վորպես մի ձգտում՝ պաշտպանելու ստրկացված դյուշագիւղացիները։

1847 թվի դարնանը նա պատրաստվում էր մեկնել Խաղիա—իր կրթութիւնը շարունակելու։ Կուլիշի ջահել կիսն այս ճանապարհորդութեան համար տվեց իր ունեցած բոլոր դրամը և թանկարժեք իրերը։ Ամեն ինչ պատրաստ էր մեկնելու։

Ապրիլին պետք է կայանար Կոստոմարովի հարսանիքը։

Շեվչենկոն ճանապարհորդում էր Ուկրաինայում։ Նա վորոշել էր այդ հարսանիքի որը վերադառնալ Կիեվ։

Նա չգիտեր, վոր ուսանող Պետրովի մատնը չուրթյամբ արդեն ձերբակալված են Կիրիլ — Մեֆոդյան յեղրայրութեան բոլոր անդամները, դրանց թվում և Կոստոմարովը, Դուլակը և Կուլիշը։ Նա չգիտեր, վոր գրավոր



Կիեվում

Նկ. Շեվչենկոյի

հրաման էր տրված փնտռել իրեն՝ Տարաս Շեվչենկոյին, «վորպես բացառիկ կարևոր պետական մի հանցավորի»։

Ապրիլի 5-ին Շեվչենկոն հասավ Կիեվ, հազալ իր Փրակը, հաստատ համոզված լինելով, վոր անմիջապես կընկնի հարսանիք։ Գետափին նրան սպասում էին վոստիկանները։ Նրան իսկույն և եթ ձերբակալեցին և տարան Կիեվի գեներալ-նահանգապետի մոտ։

— Այդ ի՞նչ է, Տարաս Գրիգորևիչ, Փրակ հազած և սպիտակ փողպատով, — հարցրեց նահանգապետը։

— Յես չտալում էյի գնալ Կոստոմարովի

հարսանիքը: Յես նրա մոտ հրավիրված եմ
վորպես խաչեղբայր, — պատասխանեց՝ պոե-
տը:

— Դե, ուրեմն վորտեղ փեսացուն է,
այնտեղ ել կլինի խաչեղբայրը, — հեղնարար
նկատեց նահանգապետը:

— Լա՛վ հարսանիք է, — ասաց Շեվչեն-
կոն:

Ապրիլի 17-ին նրան հասցրին Պետեր-
բուրգ:

Սկսվեց Կիրիլ-Մեֆոդյան յեղբայրու-
թյան գործի քննությունը: Շեվչենկոն նրա-
տած էր բանտում: Նա աննկուն էր և բա-
նաստեղծություններ էր գրում:

Քննությունը շարունակվում էր:

Ժանդարմների շեֆը շատ մեղմ գնահա-
տական տվեց այդ գործի մասին.

«Ընկերության նպատակն է յեղել ի մի
համախմբել սլավոնական ցեղերը ուսն կայս-
րի դաշխսոնի ներքո: Այս նպատակին հասնելու
համար, վորպես միջոցներ, յենթադրվելիս են
յեղել վողեհչեկ սլավոնական ցեղերին՝ սե-
փական ժողովուրդը հարգելու համար և հա-
մերաշխություն մտցնել սլավոնների միջև»:

Նույն այդ ղեկուցման մեջ այսպիսի նե-
րողամիտ կարծիք էր արված ընկերության
անդամների մասին.

«Նրանք յերբեք չեն մտահղացել վոչ
ժողովրդական ցնցումներ, վոչ խռովու-

թյուններ, վոչ Ռուսաստանի որինական իշ-
խանության բարեփոխումներ, և առավել ևս՝
վորեւե զինված տեղաշարժ»:

Սակայն «ուրիշ սլավոնասեր անձանց՝
նման մի ուղղությունից հեռացնելու նպատա-
կով», հիշված էր վճռի մեջ, Կոստոմարովին
և Գուլակին դատապարտեցին — մեկին՝ մի
տարով, մյուսին՝ յերեք տարով բանտարկու-
թյան, իսկ մյուսներին յենթարկեցին գանա-
ղան չնչին պատիժներին:

Շեվչենկոն ժանդարմներին ապացուցեց
իր՝ վորպես թե ընկերությանն անմասնակից
լինելը և քննությամբ արդարացում: Սակայն
ընկերության բոլոր անդամներից մասնավո-
րապես նա յեր, վոր ամենածանր պատիժն
ստացավ: Նրան կործանեցին ժանդարմների
դատած բանաստեղծությունները:

Շեվչենկոյի ձերբակալության մասին ու-
ղարկած իր տեղեկագրի մեջ Կիևի նահանգա-
պետ Ֆունդուկելյը հայտնել էր «Նորին կայ-
սերական մեծության սեփական գործաւարու-
թյան յերրորդ բաժանմունքին» (ոխրանկա-
յին).

«Այն անձանց թվում, վորոնց նկատ-
մամբ՝ Կիևի, Վոլինսկի, Պոդոլսկի պարոն
ուղմական դեներալ-նահանգապետից իմ ըս-
տացած հրամանագրի համաձայն ուշադրու-
թյուն էր դարձված, մատնանշված էր Ս.
Պետերբուրգի Ակադեմիայի նկարիչ Տարաս

Փրիգորևիչ վորդին Շեվչենկոյի: Այս նկարի-
չը Չերնիգովի նահանգից վերադառնալուն
պես յերեկ ձերբակալվեց Կիև քաղաքը մըտ-
նելու միջոցին և անմիջապես բերվեց ինձ
մոտ: Նրա քղքերի մեջ գտնվեց մի ձեռագիր
գիրք՝ նրա սեփական մալորոսսական բանաս-
տեղծություններով, ուստի և թե այդ, և թե
մյուս բոլոր նրա մոտ գտնված բանաստեղ-
ծությունները, ինչպես նաև Շեվչենկոյի անձ-
նական գրադրությունը յես պարտք համարե-
ցի ներկայացնել Նորին կայսերական մեծու-
թյան սեփական գործավարության յերրորդ
բաժանմունքին:

Սույնի հետ միասին ուղարկվում է և
նկարիչ Շեվչենկոն խիստ հսկողությամբ,
կազմված մեկ վոստրիկանական սոյալից և մեկ
չարքային ժանդարմից:

Քաղաքացիական նահանգապետ՝ Գունդու-
կիեյ»:

Յարական ոխրանկայում Շեվչենկոյին
հարցաքննելիս այսպիսի հարց արվեց նրան.

«Ի՞նչ առիթներով եյիք դուք այն աստի-
ճան անպատկառացել, վոր ամենահանդուգն
բանաստեղծություններն եք գրել թագավոր
կայսեր դեմ»:

Շեվչենկոն չիտակ պատասխանեց.

«Դեռ ևս Պետերբուրգում ապրած ժամա-
նակ յես ամեն տեղ լսել եմ հանդուգն խոսքեր
և պարտավանք՝ թագավորի և կառավարու-

թյան հասցեյին: Մալորոսսիա վերադառնա-
լով, յես ավելին ու վատթարը լսեցի Չահել և
լրջմիտ մարդկանց չըջանում. յես տեսա գյու-
շացիների չքավորությունը և նրանց սոսկալի
կեղեքումը կալվածատերերի, պոսեսսորնե-
րի*) և եկոնոմ—չյախտիչները**): Կողմից:
Այս բոլորն անում եյին և հիմա ել անում են
թագավորի և կառավարության անունով»:

Շեվչենկոն ծնկի չեկավ ցարական ոսլրիչ-
նիկների առջև. նա չիտակ նրանց յերեսին ա-
սաց ճշմարտությունը:

Յեվ նրանք դատապարտեցին Շեվչենկո-
յին:

Դատապարտեցին վոչ թե Կիրիլ—Մե-
ֆոդիյան յեղբայրությանը մասնակցելու
հիմքով, այլ «Сон» պոեմի համար, վոր
գտնվել էր ձերբակալության ժամանակ, նրա
բոլոր խիզախ բանաստեղծությունների հա-
մար, ուղղված ժողովրդի հարստահարողների
դեմ:

*) Посесор — գործարան վարձակալող (արենդա-
տոր):

**) Эконом-шляхтичы կոչվում եյին ազնվականա-
կան կալվածքների այն կառավարիչները, վորոնք
սնանկացած լինելով վորպես մանր ազնվականության
քեկորներ, ստիպված եյին այլևս վարչական պաշտոն-
ներ ստանձնել — եկոնոմներ դառնալ: — Шляхта-ն
լեհական մանր ազնվականությունն էր:

Յեղրափախման մեջ ժանդարմների շեֆը
զրեւ եր.

«Շեվչենկոն չի պատկանել ուկրաինական
սլավոնական ընկերությանը, այլ գործել է
առանձին, տարվելով սեփական փչացածու-
թյամբ: Վրդովեցուցիչ վոդու և հանդգնու-
թյան պատճառով վոր չափ ու սահման չունի,
նա պետք է ճանաչվի ամենակարևոր հանցա-
վորներից մեկը»:

Ընդունվեց այսպիսի վճիռ.

«Նկարիչ Շեվչենկոյին՝ վրդովեցուցիչ և
վերին աստիճանի հանդուգն բանաստեղծու-
թյուններ շարադրելու համար՝ վորպես ա-
մուր կազմվածքով ոժտված մարդու, նշանա-
կել Որենբուրգի առանձին կորպուսի մեջ իր-
րեւ շարքային զինվոր, զորահրամանատարու-
թյանը հանձնարարելով խստագույն հսկողու-
թյուն ունենալ նրա նկատմամբ, վորպեսզի
նա վոչ մի կերպ հնար չունենա վրդովեցուցիչ
և ծանախող գրվածքներ տալու»:

Այս վճիռը ներկայացվեց Նիկոլայ I ցա-
րին ի հաստատություն: Յարը կարգաց բա-
նաստեղծությունները, «Сон» սյունը, գոր-
ծին հարակից բոլոր այլ նյութերը և փրփը-
րեց: Պատիժն անբավարար թվաց նրան և նա
իր ձեռքով ավելացրեց ոխրանկայի յեզրա-
փախման վրա.

«Խստագույն հսկողութեան տակ դնել նը-
րան՝ արգելելով գրել ու նկարել»:



Տյուկ—Ղարաչայ

Նկ. Շեվչենկոյի

III

1847 թվի հուլիսին Ֆելքեգեր Վիդ-
լերն ութ որվա ընթացքում կտրելով ավելի
քան յերկու հազար կիլոմետր, Շեվչենկոյին
հասցրեց Որենբուրգ:

Որենբուրգից Շեվչենկոն ետապով հե-
տիտան անցավ մոտ յերեք հարյուր վերստ՝
մինչև Որսկ քաղաքը — իր աքսորավայրը:

Բերդը չըջապատող արևատուհոր լերկ
տափաստանը բաց գերեզման թվաց նրան:

«Արդյոք յերգեր յերգո՞ւմ են այստեղ,—
մտածեց պոետը: — Այսպիսի դեկորացիա յե-
ղած վայրում հնարավոր է սոսկ մեռած լու-
թյունը, ծանր հառաչանքներով բնդհատվող և
վոչ թե հնչուն յերգերը»:

Առաջին կենդանի հիշեցումը մարդկանց
մասին, դա գրոշմավորած կոճղավորներին

բաղմությունն եր: Զորանոցների մոտ Շեվչեն-
կոն տեսավ 4-րդ Որենբուրգյան զնդի 5-րդ
գումարտակի հոգնատանջ համաքայլող զին-
վորներին: Նրան նշանակեցին այդ գումարտա-
կի 3-րդ վաշտի մեջ: Հազցրին չինել: Գլուխն
ածխլեցին, ինչպես տաժանակիրները հետ ե-
լին վարվում:

Վաշտապետն իսկույն և եթ խոստացավ
ճիպոտներով մի լավ ծեծել Շեվչենկոյին:
Մեծ պոետը լուռ լսեց նիկոլայեվյան բոի
վոստիկանին:

«Արդյոք յերգեր յերգում են այստեղ»:

Ի՞նչ յերգ, ի՞նչ բան: Ծաղրանք, խոստա-
վարժություն, ապտակ ու հարված բերանին,
ծեծ, գինարուք, սանձարձակ կամայականու-
թյուն — ահա թե նա ինչ տեսավ Որսկում:

«Ասա թե նենդ ճակատադրի ինչի՞ն եր
պետք եսպես չար ու թունալից ծաղրի յեն-
թարկել ինձ, գցելով քրիստոսասեր զորակա-
նության ամենահոտած տակաճի մեջ...»

Ռազմական խոստավարժությունը նա չեր
կարողանում կատարել ինչպես պետքն է:

«Դժվար է, ծանր ու անհնար, խլացնել քո
մեջ մա՛րդկային ամեն արժանապատվու-
թյուն, ձգված կազնել, լսել հրամանի խոս-
քերը և շարժվել անշունչ մեքենայի պես...»

Դանդաղ անցնում էին զորանոցային
միորինակ ուրերը: Առավոտյան վաղ լավում
եր թմրկահարությունը: Հրապարակի վրա

սկսվում եր զորավարժությունը: Անմիտ այդ
համաքայլումը տեսնում եր հինգ ժամ: Մարդիկ
սեանում էին հոգնածությունից: Իսկ հետո
մինչև ուշ յերեկո — «բանավոր պարապմունք»,
յեֆրեյտորի խոսքերով բառ առ բառ պետք
եր բերանացի անել անունների և ազգանուն-
ների մի յերկար շարան, սկսած վաշտապետից
մինչև ռազմական մինիստրը:

Յերեկոյան ժամի իննին զորանոցը փա-
կում էին:

Վարժատախտերի վրա սկսվում եր յեր-
կար և հոգեմաշ տաղտկալի զրույցը: Տանջ-
ված, չարչարված ու բթացած զինվորները
ծուլ-ծուլ կատակում էին միմյանց հետ,
անվերջ պատմելով միևնույն բանը տարբեր
յեղանակներով. ո՛վ ո՛ւմ է ծեծել, ո՛վ ինչ-
քան է ողի խմել, ո՛վ ո՛ւմ է տարել թղթա-
խաղի մեջ, ո՛վ ինչքա՛ն է տարել, վաղը ո՛վ
ո՛ւմ կծեծի...

Իսկ այսպես կոչված «հրամանատարու-
թյունը — այդ բոլոր յեֆրեյտորները, Փելդ-
ֆերենները, ունտերները և այլն — հարբեցող-
ների, թղթամոլների, կաշառակերների, ա-
րյունարբունների և թալանչիների մի խառնա-
ժողով եր:

«Մինչև իմ Որսկ բերդը դալը յես մըտ-
քովս ել չեյի անցկացնում, թե դոյություն
ունեն մեր ուղղափառ հասարակության այդ
զաղրելի զավակները»:



Շղթախակապ կալանավորներ

Նկ. Շեվչենկոյի:

Շեվչենկոն հիվանդացավ: Պետերբուրգյան խոնավ բանառւմ նա վոսկրացավ եր քստացել: Որսկ բերդում վատ սնունդի հետեւանքով առաջացավ լնդախտ: Փող չունէր: Ամեն ինչ ձեռից խլել էլին. մոտը յեղած դրամը, թուղթը, մատիտները, բոլոր անհրաժեշտ իրերը: Դրսից նամակ չէր ստանում:

«Յեթե յես մի հրեշ լինեյի, մի արյունարբու, — գրել ե Շեվչենկոն իր հուշատետրի մեջ, — ապա այդ դեպքում ել ավելի հարմար մահապատիժ չէր կարելի մտածել, քան յեթե ինձ վորպես զինվոր սրենբուրգյան առանձին կորպուս ուղարկելը: Ահա թե վորտեղ ե իմ անասելի տանջանքների պատճառը: Այդ դեռ քիչ ե, ինձ արգելված ե նկարել: Խլել իմ խեղճ գոյության ամենանվիրական մասը: Իր իսկ սատանայի նախագահությամբ գործող տրիբունալն անգամ չէր կարող այդպիսի անսիրտ, անմարդկային դատավճիռ հանել: Իսկ դատավճռի անողորմ կատարողները այն գլուխ բերին վրդովեցուցիչ ճշտակատարությամբ: Հեթանոս Ոգոստոսը Նազոնին աքսորելով վայրագ հեթերի յերկիրը, չարգելեց նրան գրել և նկարել: Իսկ քրիստոնյա Նիկոլայն ինձ արգելեց և՛ մեկը և՛ մյուսը: Յերկուսն ել դահիճներ են...»

Յեվ ահա այս խորապիտոյում, մենակ, հարազատներից ու բարեկամներից կտրված, տանջված ու հիվանդ Շեվչենկոն մատիտի մի

վողորմելի կտոր ձեռին, ճարպամտի մնացորդի լույսով՝ կամ կիրակի որը սպանիչ տափաստանի մի վորեւ տեղում հանճարեղ բանաստեղծություններ ե գրում:

Շեվչենկոն կիրակի որերը գողի պես տափաստան եր դուրս գալիս բերդապատնէից—միայն թե վոչ վոք չնկատի:

Նա չեր պատրաստվում փախչելու— վոչ, ո՛ւր կարող եր փախչել...— խորհել, բանաստեղծություններ գրել, վերհիշումներով տարվել, յերգել իր սիրած, փայփայած յերգը:

Ո՛յ, յե՛լ, յե՛լ, աստղիկ դու իրիկվամ:

Ի՞նչ անել, ինչպես դուրս պրծնել այս սոսկալի գերությունից:

Ո, հնար լիներ ջարդել կապանքներ
կամ քե՛ կրծելով կտրել շղթաներ.
Բայց չե՛, դարբիններն այնպես չեն կռել,
Այնպես չեն կռվել յերկաթը ամուր,
Վար կարեմայինք կրծելով կտրել...
Վա՛յ մեզ՝ վարքերիս և ստրուկներիս—
Ուրալից դենը՝ մե՛ծ տափաստանում:

Այս հեռավոր յերկիրը քշված Շեվչենկոն, ժանտահոտ զորանոցում, չնայած իր վիճակի անհուսալիությանը և անթափանց խավարին, անհողզողդ հավատում եր, վոր արդար ե իր ուղին, չարիքը հեղափոխականորեն զիմակադերծ անելու, հանուն ճշմարտության պայքարելու ուղին, հավատում եր, վոր ստրկու-

թյան մեջ տառապող ժողովուրդը կարթնանա, կապտամբի, կկոտրատի իրեն խոշտանգող շղթաները և բռնակալներն արյունով «խումարահան կլինի»:

Շեվչենկոյի ձերբակալությունից հետո նրա «հայրենակիցներից» շատերը, վորոնք առաջ սեր եյին բացատրում նրան, յերես դարձրին նրանից և ամեն կերպ ջանում եյին իրենց նվիրվածությունն ապացուցել ցարիդմին:

«Հենց այդ ժամանակ եր, վոր վոչնչացվեցին (Շեվչենկոյի) բազմաթիվ նամակները, մակագրված դրքեր, ձեռագրեր և թանկարժեք պատմական ու ազգագրական նյութեր, վոր այրվեց կամ թաղվեց հողի մեջ»,— գրել ե Բելոգերսկին իր հիշողությունների մեջ:

Ցարական ուղրիչնիկներն ու բյուրոկրատները ձեռք առան իրենցից կախված բոլոր միջոցները, վորպեսզի վոչնչացնեն պոետի գլխած հեղափոխական սերմերը:

Գնե՛րալ Շենը առաջարկել եր ժանդարմական սպաներին «արգելել և վաճառքից հանել Շեվչենկոյի ծաղրական և վերին աստիճանի հանդուգն յերկերը» և «ամենազգուշ ու աննկատելի կերպով» հսկել, վոր այդ յերկերը չտարածվեն:

Սակայն, չնայած ամեն կարգի արգելքներին ու խստություններին, ցարական իշխանություններին չհաջողվեց ժողովրդական լայն

մասսաներից թագցնել մեծ պոետի յերկերը:

«Շեվչենկոյի յերկերը,— գրել է նշանավոր հեղափոխական Պետրաշևսկին,— բազմաթիվ որինակներով սպառվեցին այն յերկրամասում և պատճառ դարձան մտքերի սաստիկ հուզմունքի, վորի հետևանքով հիմա ել (այսինքն 1849 թվին) Մալորոսսիան զտնվում է հուզումնալից վիճակում»:


1848 թվին Շեվչենկոյին իր հետ վերցրեց լեյտենանտ Բուտակովի արշավախումբը «տափաստանում և Արալյան ծովի ափերին տեսարաններ հանելու համար»:

Յերկու տարի նա ապրեց արևախանձ, չուսումնասիրված տափաստանում և ծովափին:

«Ամառն անցնում եր ծովում, ձմեռը՝ տափաստանում, ձների մեջ կորած ջելումեյկայում, վոր քողտիկի պես մի բան է, ուր յես, խեղճ նկարիչս կիրգիղներին եյի նկարում»,— գրել է Շեվչենկոն Վ. Ն. Ռեպնինային:

Սակայն այս վայրի տափաստաններում և կատողի Արալյան ծովի ալիքների վրա անհամեմատ ավելի լավ եր, քան թե Ուրսի բերդում:

Շեվչենկոն նկարում եր ծովը, խուլ տափաստանները, կիրգիղներին, նրանց կիրիտկաները: Բազմաթիվ նկարներ, վորոնցից կազմվել եր մի մեծ ալբոմ, չատ լավ պատ-



Նկ. Շեվչենկոյի:

այս դիմիկ Լադոնի մոլի

կերում են այս անապատ վայրերի չոր ու ցամաք, խիստ տեսարանները:

Ընկերները նրան ուղարկեցին ջրաներկեր, լավ մատիտներ, թուղթ, մի քանի գիրք:

1848 թվի աշնանն արշավախմբի յերկևայմ նավը խարխալ գցեց Սիր-Դարիայի գետաբերանում: Արշավախմբի անդամները ձգմեռելու համար տեղավորվեցին Կոս-արալ կոչված ամրության մեջ:

Շեվչենկոն բանաստեղծություններ երգում: Իհարկե, նա վոչ մի թույլտվություն չէր ստացել — դա սոսկ հանդիմություն էր: Նա բանաստեղծություններ երգում և թաղցնում յերկարավիզ կոշիկների մեջ: Բուռա-կովը այդ նկատեց, սակայն այնպես ցույց տվեց, թե վոչինչ չգիտե:

Կոս-արալում Շեվչենկոն գրեց «Парус» պոեմը, վորի մեջ ցնցվող հեղափոխական թափով արտահայտել է իր ատելութունը դեպի ժողովրդների բռնակալները և անձնվեր անկեղծ սերը դեպի աշխատավորները:

Գե'թ Թոցմեյին գլուխները

Այն ցարերի՝ դահիմների...

Կոս-արալ ամրությունը թաղվել էր ձյունի տակ: Հատ ու կենտ տերևազուրկ ծառերը կոթորկի չնչից մինչև գետին եյին թեքվում:

Շեվչենկոն ծանր հիվանդ էր ընդախտով, բայց նա արի յեր, չէր վհատվում:


Կոս-արալում նա շատ ժողովրդական յերգեր և գրել, հոյակապ մի բալլադա՝ «Взъ той у Катерины», մի քանի պոեմ, լիրիքական բանաստեղծությունների մի ամբողջ ցիկլ: Այս գրական յերկերը հիմա հանդիսանում են ուկրաինական ժողովրդի մեծագույն հարստությունը, հիմա դրանք խանդավառությամբ կարդում են տասնյակ միլիոնավոր մարդիկ, այնինչ մուսյլ անցյալում դրանք ստեղծագործող հանճարը պետք է գրածը թաքցներ իր կոշիկների մեջ, ասես դա ինչ վոր նողկալի, վնասակար ու ամոթալի բան լիներ:

Արշավախմբի աշխատանքներն ավարտելուց հետո լեյտենանտ Բուտակովը և այդ յերկրամասի պետ գեներալ Որբուչովը լավ գնահատական տվին Շեվչենկոյի՝ կատարած գործի մասին և վճռեցին ամեն կերպ ձգտել մեղմացնելու նրա վիճակը:

Մի զեկուցագիր ուղարկվեց Պետերբուրգ:

Սպասելով, թե իր բախտն ինչ լուծում կունենա, Շեվչենկոն ապրում էր Որենբուրգում (1850 թ.): Նա հույս ուներ, վոր իր վիճակի մեղմացման համար Որբուչովի և Բուդակովի արած միջնորդությունը բարեհաջող յեղք կունենա:

Նրա հոգու խորքում մի միտք էր մխրտում — չուտով ազատվելու հնարավորության



Շեվչենկոյի ինքնանկարը (հիսունական թվ.)

մասին։ Սակայն ամեն ինչ միանգամայն այլ
ընթացք ստացավ։ Նիկոլայ ցարը զայրույթով
մերժեց այդ խնդրարկությունը և իր
վրդովմունքը հայտնեց Որբուչովին ու Բու-
տակովին։

Շեվչենկոն այդ ժամանակ ապրում էր
մասնավոր բնակարանում. նկարում էր, բա-
նասեղծություններ գրում, վորոշ չափով ա-
զատ էր զգում իրեն, քան Որսկում։ Հենց այդ
չրջանում էր, վոր նա նկարում էր իր իսկ
գեներալ Որբուչովի պորտրեն։

Յեվ հանկարծ — խուզարկություն, ձեր-
բակալություն։ Շեվչենկոյին նստեցնում են
«գլխավոր հաուպտմանստում» և շուտով
բանտ տեղափոխում։

Հետագայում պարզվեց, վոր վոմն Իսա-
յեվի մատնությամբ՝ այն մասին, վոր Շեվ-
չենկոն, չնայած արգելանքին, շարունակում է
բանասեղծություններ գրել ու նկարել, —
Պետերբուրգում վճռում են Շեվչենկոյին տե-
ղափոխել Կասպից ծովի ամալի տախտան ա-
փը, Նովոպետրովսկոյի կոչված ամրությու-
նը, և նրան այնտեղ պահել ամենայն խստու-
թյամբ։

Որբուչովը, վոր զրանից քիչ ժամանակ
առաջ միջնորդել էր Շեվչենկոյի վիճակը մեղ-
մացնելու համար, անհապաղ հրաման արձա-
կեց, վոր նրան ձերբակալեն և կես տարուց
ավելի պոետին պահեց որենրուրդյան և Որսկի

բանտերում, ամենաղեժնի պայմաններում, քրեական դրոշմված տաժանակիրներին հետ մի կաղեմատում միասին:


1850 թվի հոկտեմբերին Շեվչենկոյին պահակների հսկողության տակ հասցրին Նովոպետրովսկայա ամրությունը:

Նորից զորանոց, նորից բիրտ ու անսիրտ ֆելդֆերեշներ: Նորից ապարդյուն բուժ քայլվածք և քայլելիս վոտների ծայրերը դուրս ցցելու պարտադրություն: Որ ուրի հետեից— շատ ուրեր շարունակ— Շեվչենկոն հիվանդ ու հոգնատանջ, պահակ և կանգնած հրաճանհն ուսին: Նրա վրա գոռում—գոչում են, չնչին առիթներ փնտռում— պատիժներ տալու, ծաղրում, ծանակում են:

Մռայլ բնություն, մերկ տափաստան, միտքինակ ու գորշ ավազուտ, քարեր, սև-կանաչավուն կասպից ծովը... այս եր մեծ պոետի նոր աքսորավայրի պեյզաժը:

«Ծնվել և մեծացել եմ ստրկության մեջ, և ինչպես յերևում և, կմեռնեմ իրրև զինվոր... Լավ և, վոր մի վորեե փախճան լիներ, ապա թե վոչ, իսկապես, հոգիս դուրս յեկավ»:

Անչափ ծանր էյին Նովոպետրովսկ ամրության մեջ անցկացրած յոթ տարիները: Անդադար հսկում էյին, հետևում նրա ամեն մի քայլին, հաճախ՝ խուզարկում, արգելում էյին գրել ու նկարել: Սակայն Շեվչենկոն,



Կիրգիզական յուրտում

Նկ. Շեվչենկոյի

չնայած այդ դաժան պայմաններին, շատ և շատ եր աշխատում:

Ահա այդ ժամանակաշրջանում եր, Վոր համայն Ռուսաստանի համար ուրախալի մի գեպը տեղի ունեցավ. մեռավ Նիկոլայ I-ը: Շեվչենկոյի հոգում վերստին ազատության հույսի նշույլ ծագեց: Նրա մտերիմները միջնորդութուն ելին հարուցում Պետերբուրգում: Շեվչենկոն սպասում եր:

Ամնիստիայի համար նշված քաղաքական աքսորականների ցուցակը ներկայացվեց նոր ցարին—Ալեքսանդր II-ին: Յարը հիշեց «СОН» պոեմը, ուր բանաստեղծը յերգիծանքով նկարագրել եր Նիկոլայ I-ի արքունիքը և նրա կնոջը՝ Ալեքսանդրա ֆեդորովնային, — հիշեց և փրփրեց... Նա իր ձեռքով ցուցակի մեջ ջնջեց Շեվչենկոյի անունը, ասելով. «Սրան յես չեմ կարող ներել—նա վիրավորել և իմ մորը»:

Յեվ նորից խորտակվեց հույսը: Շեվչենկոն ամնիստիա չցուցավ...

Յերկու տարի հետո միայն Շեվչենկոն կարողացավ դուրս գալ Նովոպետրովսկի ամբուլժյունից:

1857 թվից Շեվչենկոն որագիր եր պահում: Այդ գիրքն իր եպոխայի ուշադրավ փառաթողթն և, անգնահատելի մի նյութ՝ մեծ պոետի հանձարեղ ու պարզասիրտ անձնավորությունն ըմբռնելու համար: Շեվչեն-



Շեվչենկո. ինքնանկար. 1848—1849 թ. թ.

կոն այդ թվից առաջ եւ որագիւր եր պահում,
սակայն հրամանատարութեան ճշումները,
խուզարկութիւնները նրան հարկադրել եյին
վռնչացնել այդ հուշատետրերը:

«Անցյալի եւ այդ ժամանակվա ընթաց-
քում տեսածիս սոսկ հիշողութիւնը,— ասում
ե նա իր որագրի մեջ,— սարսուռ ե ազդում
ինձ, հապա ի՞նչ կլիներ, յետե յես դրի առ-
նեյի այն մռայլ դեկորացիան ե անսիրտ ու
անհոգի, բիրտ կեղծավորներին, վորոնց հետ
յես հարկադրված յեղա խաղալ այդ մռայլ,
միօրինակ տասնամյա դրաման»:

յեղնելով, սակայն հայրենակիցներս մի տե-
սակ խուլ են պահում իրենց հիշողության մեջ
նման սրբացումները: Նրանք (իմ հայրենա-
կիցները) համարյա թե գլխի յեն ընկնում,
վոր յեթե ցարը բարձրանա աղապիսի մի լե-
ռան զազաթ, ապա, անշուշտ, վոչ առանց
նպատակի, այլ, պետք է հուսալ նրա համար,
վորպեսզի իր անկշտում աչքով մի հայացք
գցի շրջակայքին, նրա վրա (յեթե նա գորա-
ւիար է) միանգամից վորքան հավատարիմ
հպատակներ կարելի յե սպանել, իսկ յեթե
նա, աստված մի՛ արասցե, գյուղատնտես է,
ապա այդ առավել ևս վատ է, մանավանդ յեթե
շրջակայքը անբերրի յե, ապա նա բարձրա-
գույնս կհրամայի բերրիացնել աչն, իսկ այդ
դեպքում ճորա գյուղացու քրտինքով ու ա-
րյունով կպարարտանան անպտուղ աղուտները:
Իմ հայրենակիցները, անշուշտ, առանց պատ-
ճառի չե, վոր չեն սրբացնում նման բնասահ-
մանավայրերն իրենց հիշողությամբ»:

Նիժնի-Նովգորոդում Շեվչենկոյին արգե-
լեցին շարունակել ճանապարհը: Պետերբուր-
գից հատուկ կարգադրություն եր յեկել:

«Թղթի մեջ ասված է, գրել է նա իր հու-
շատետրում, — վոր ինձ արգելված է մուտք
գործել զույգ մայրաքաղաքները և վոր յես
գտնվում եմ վոստրիկանության խիստ հսկողու-
թյան տակ: Ի՞նչ լավ ազատություն է, շրդ-
թայակապ չուն: Դա նշանակում է, չարժեք

չնորհակալություն հայտնել, ձե՛րդ մեծու-
թյուն...»

Սոսկ կիսով չափ եյին ներումն չնորհել:
Նա գրեց իր մտերիմներին, Պետերբուրգ:
Սրանք նորից սկսեցին միջնորդություններ
հարուցել...

Պետական մարմինները պահանջում եյին,
վոր նա վերադառնա Որենբուրգ և այնտեղ ըս-
պասի, թե ուր կնշանակեն ապրելու: Նա ըս-
տիսլված յեղավ հայտարարել, թե հիվանդ է
և մնալ Նիժնի-Նովգորոդում ու ապրել վոս-
տրիկանական հսկողության տակ:

«Ե՛ս ել քո Մոսկվան: Ե՛ս ել քո Պետեր-
բուրգը: Յե՛վ թատրոնը, և՛ Ակադեմիան, և՛
Երմիտաժը, և մտերմական քաղցր գրկախառ-
նումները հայրենակիցներիս հետ, իմ բարե-
կամներ՝ Լազարևսկու և Գուբակ-Արտեմովսկու
հետ: Նզո՛ւվք ձեզ, կորպուսական և այլ հը-
րամանատարներ, իմ՝ անպատիժ տանջող-
ներ: Զաղրելի՛ յե: Անմարդկային: Նողկալի-
որեն զաղրելի յե»:

Ժամանակը դանդաղ եր անցնում:

Շեվչենկոն նկարում եր Նիժնի-Նովգորո-
դում:

Այս քաղաքի բնակիչները լավ ընդունեցին
նրան: Շատ բանիմաց, լուսավոր մարդիկ նը-
րան իրենց տունն եյին հրավիրում, ամեն
կերպ ջանում եյին զուրգուրել, մխիթարել
նրան: Սակայն նա մխիթարություն չեր գըս-

նում իր համար: Նա հոգեպես դաժանորեն տանջվում էր: Գրեց իր մտերիմներին, խնդրեց այցելել իրեն: Արձագանքեց սոսկ Շչեպկինը: Յոթանասունամյա ծերունին արշավանոք հասավ Մոսկվայից և արտասուքն աչքերին գրկեց իր հավատարիմ բարեկամին:

«Ա՛յ քեզ առույգ ծերունի, — բացականչում է Շեվչենկոն իր նամակներից մեկում, — չորս հարյուր վերստ ճամբա կտրեց վաղուց չտեսած բարեկամին այցելելու համար: Բարեկամ ասածդ եսպե՛ս կլինի: • Յեվ յես անսահման յերջանիկ եմ, վոր այսպիսի անկեղծ բարեկամ ունեմ»:

Շեվչենկոն գրեց իր նշանավոր հեղափոխական պոեմը՝ «Неофиты» և այն նվիրեց Շչեպկինին:

Շեվչենկոն Նիժնի-Նովգորոդում կարդում էր Պուշկինի, Սալտիկովի, Գերցենի յերկերը, պոետ գեկաբրիստների բանաստեղծութունները:

Գերցենի հրատարակած գրքույկի շապկի վրա տեսնելով մահապատժի յենթարկված գեկաբրիստների դիմանկարները, նա գրում է իր հուշատետրում.

«... Մեր առաջին նահատակ առաքյալների դիմանկարները տեսնելս այնպես ծանր, այնպես տխուր ինձ խոցեց, վոր յես մինչև հիմա յեղ հանգիստ չունեմ այդ մռայլ տապալուրությունից: Վո՛րքան լավ կլիներ, յեթե

մի մեղալիոն պատրաստվեր ի հիշատակ այդ գազրելի դեպքի: Մեղալիոնի մի յերեսին — այդ քաջ նահատակների պորտրետները՝ մակագրությամբ. «Ազատության առաջին ոռւս ավետարեւոյնները»: Իսկ մյուս յերեսին՝ վատահամբավ Тормоз-ի (Նիկոլայ I-ի) պորտրեն, մակագրությամբ. «Վոչ առաջին ոռւս թագաւիր դահիճը»:

Շեվչենկոն նյութեր է հավաքում դեպքերիստների վերաբերյալ և պատրաստվում է պոեմ գրել նրանց մասին: Նիժնիում գրած «тородивный» անալարտ պոեմում նա խորին կարեկցությամբ լի մի քանի տող է նվիրում գեկաբրիստներին:

Այս պոեմում նա զայրույթով է դիմում աստծուն.

Իսկ դու՝ տեք ասված, ա՛յք ամենատես, Յերկնի բարձրերից արդյոք նայեցի՞ր — Ինչպես շղթայված սուրբ ստրուկներին Հարյուր-հարյուրով փշեցին Սիբիր, Ի՛նչպես տանջեցին, Ի՛նչպես խաչեցին Յեղ ժանտ կախալան նրանց հանեցին: Զիմացա՞ր արդյոք: Ինչպես նայեցիր Բարձրից դու նրանց, վոր չկուրացար. Ա՛յք ամենատես, ով դու յերկնի ցար, Դու խոր չես տեսնում, տարված ես ֆնով Դո տապանակում: Իսկ մեք ցարերը... Գրո՛ղը տանի ցարերին գազիր, Թող նրանք գուզվեն շղթա-կապանով,

Իսկ յես կթռչեմ, կհասնեմ Սիրիբ,
 Բայկալից դեմը աչք կածեմ լեռներ
 Ու մուր- ֆարայրեր, հարեր անհատակ,
 Յե՛վ ճեզ՝ մարտիկներ սուրբ ազատությա՛ն,
 Գերի սև մուրթին և ստրկության՝
 Յես դուրս կրեքեմ պայծառ լույսի տակ—
 Ի ցույց ցարերի և ազատ մարդկանց՝
 Յերկար շարֆերով և շղթա զարկած:

Հաժանաբար պոեմի այս մասը պետք է
 լիներ վորպես մի նախերգանք-ներածական
 դեկարրիստների մասին մտահղացված պոեմի
 համար, վոր Շեվչենկոն պատրաստվում էր
 գրել:

Մի քանի ամիս հետո միայն Շեվչենկոն
 թույլտվություն ստացավ բնակություն հաս-
 տատելու Պետերբուրգում: Շեվչենկոն Պե-
 տերբուրգ էր գնում և իր հին բարեկամների
 հետ ունենալիք հանդիպումից անկեղծ ուրա-
 խություն էր սպասում... Կայարանում վոչ
 վոչ չդիմավորեց նրան:

Կառք նստած նա մենակ գնաց իր հին
 բարեկամ Միխայիլ Լազարևսկու բնակարա-
 նը: Նրան ջերմությամբ ընդունեցին, ինչպես
 հարազատի: Սակայն աստիճանաբար նա ինչ-
 վոր փոփոխություն նկատեց իր մերձավոր բա-
 րեկամներից շատերի մեջ: Կուլիշը, Կոստո-
 մարովը, Բելոզերսկին և ուրիշ շատերը, վո-
 ռոնց հետ Շեվչենկոն յերբեմն յերազում էր



Ն. Գ. Չերնիեվսկի

գյուղացիները ազատագրության մասին, հայ-
րենիքի ազատության մասին, հիմա դժկա-
մությամբ եյին խոսում անցյալի մասին: Նը-
րանք կարծես թե ամաչում եյին այդ անցյա-
լից, այն համարում վորպես մոլորանք ջահել
տարիների:

Շեվչենկոն զարմացավ:

«Արդյոք ո՞վ է փոխվել, — հարցնում եր նա
ինքն իրեն, — նրա՞նք, թե յես»:

Մի անգամ, յերեկոյան, Կոստոմարովի
մոտ հյուր յեղած միջոցին, Շեվչենկոն ծանո-
թացավ ռուս մեծ հեղափոխական-դեմոկրատ
Ն. Գ. Չերնիշևսկու հետ:

Ապա նա ծանոթացավ մի այլ նշանավոր
ռուս մարդու, Ն. Ա. Դոբրոլյուբովի հետ, վոր
ռուս հեղափոխական դեմոկրատիայի ամենա-
առաջավոր դեմքերից մեկն եր:

Չերնիշևսկին ու Դոբրոլյուբովը ջերմորեն
վողջունեցին Շեվչենկոյին՝ վորպես ժողովրդ-
դական հեղափոխական պոետի:

«... Հիմա Շեվչենկոյի պես պոետ ունե-
նալով, — գրել է Չերնիշևսկին, — մալորո-
սական գրականությունը... կարիք չունի վոչ
վոքի բարյացակամությանը»:

Այս բառերով ռուս գրողը կամեցել է
ընդգծել Շեվչենկոյի կատարած խոչոր դերը
ուկրաինական գրականություն ստեղծելու
գործում:

«Նա միանգամայն ժողովրդական պոետ

ե,— գրել ե Դորբուլյուբովը Շեվչենկոյի մա-
սին: Մինչև իսկ Կոլցովը չի կարող համեմատ-
վել նրա հետ, վորովհետև նա իր մտքերի
կերտվածքով և մինչև իսկ իր ձգտումներով
յերբեմն անջատվում ե ժողովրդից: Ընդհա-
կառակը, Շեվչենկոն իր խոհերի և համա-
կրությունների ամբողջ հանրագումարով գըտ-
նըվում ե կատարյալ համապատասխանության
մեջ՝ ժողովրդական կյանքի իմաստավորու-
թյան և իրավակարգի հետ: Նա դուրս ե յե-
կել ժողովրդի ծոցից, ապրել ե ժողովրդի հետ
և վոչ միայն մտքով, այլև իր կյանքի հան-
գամանքներով ամուր ու անքակտելի կապված
ե յեղել նրա հետ»:

Գերցենը, վոր խորապես հարգում եր
Շեվչենկոյին, իր զրույցներից մեկում հե-
տեվյալն ե ասել նրա մասին.

«Նա մեծ ե նրանով, վոր կատարելապես
ժողովրդական գրող ե, ինչպես մեր Կոլցովը,
բայց նա անհամեմատ ավելի մեծ նշանակու-
թյուն ունի, քան Կոլցովը, վորովհետև միա-
ժամանակ և՛ քաղաքական գործիչ ե, և՛ ազա-
տության մարտիկ ե հանդիսացել»:

Ահա ինչու նա միանգամից ընդհանուր
լեզու գտավ Չերնիշևսկու և Դորբուլյուբովի
հետ, ահա ինչու նա ամուր կերպով մտերմա-
յալ նրանց հետ:

Նա շատ լավ եր հասկանում, վոր ճոր-
տատիրական կարգերը վոչնչացնել կարելի յե

ճնշված մասսաների ապստամբության ճանա-
պարհով միայն:

Չերնիշևսկին ասում եր, վոր պետք ե
Ռուսաստանին կոչ անել կացինները վերցնե-
լու, այսինքն՝ ապստամբության:

Շեվչենկոն Չերնիշևսկու հետ եր:

Նա կոչ եր անում կալվածատիրական
վոհմակի կողմից ստրկացված գյուղացիներին՝
դեն ձգել ասածու վրա դրած բոլոր հույսերը,
չհավատալ ցարերի և տերերի վողորմածու-
թյանը, անողորմաբար գործել հրով և սրով,
լավ սրած ցաքարով և կոթառներով:

Յեվ լիովին հասկանալի յե, վոր Շեվչենկոյի
նախկին բարեկամներից շատերը, այդ բոլոր
ուկրաինական լիբերալ-նացիոնալիստները՝
Կոստոմարովը, Կուլիշը և մյուսները,— վա-
խեցան մեծ պոետի հեղափոխական պաթո-
սից, նրա դայրույթից, դեպի գոյություն ու-
նեցող իրավակարգը տաժած ատելությունից:

Չե՞ վոր դեռևս այն ժամանակ, յերբ Շեվ-
չենկոն Կոստոմարովի հետ միասին գործում
եր Կիրիլլ-Մեֆոդյան յեղբայրության մեջ,
լուրջ տարաձայնություններ կային նրանց
միջև: «Շեվչենկոն նրա [այսինքն — յեղ-
բայրության] գաղափարներին վերաբերվեց
մեծ տաքարյունությամբ և ծայրահեղ ան-
հանդուրժողականությամբ, վոր առիթ տվեց
բաղմաթիվ վեճերի՝ իմ և Շեվչենկոյի միջև»,
հիշում եր Կոստոմարովը:

Նրանք չէին կարող գնալ միևնույն ճամբով: Շեվչենկոն, ինչպես վերևում ե նշված, մասնակցում էր «յեղբայրության» մեջ, բարեկամություն եր անում ուկրաինական ազգայնականների հետ սոսկ այն պատճառով, Վոր այն ժամանակ, քառասնական թվականներին, այդ բոլոր մարդիկ այս կամ այն յեղանակով կապված էին ճնշված գյուղացիությանը պաշտպանելու հետ: Իսկ յերբ Շեվչենկոն հասկացավ, Վոր վոչ քի ինքը, այլ նրանք եմ փոխվել, այն ժամանակ նա հասկացավ, Վոր նրանք բուրժուական լիբերալներ են, Վորոնք շատ գեղեցիկ կերպով համատեղում են իրենց լիբերալ դադախարները և ճառերը ուսանական ցարին նվիրված լինելու հետ, նրա համար այլևս պարզ եր, Վոր իրենք միևնույն ճամբով գնացող ուղևորներ չեն:

Շեվչենկոն, իհարկե, չգիտեր, Վոր Կոստոմարովը դեռևս հարցաքննության ժամանակ ոխրանկայում խոսել եր իր բանաստեղծությունների մասին. «Այդ յերկասիրությունները յես պահում եյի սոսկ ընթերցման համար, սակայն համակարծիք լինել այդ գաղբելի մտքերին, ինչպես չարադրված են— յես չեյի կարող»:

Շեվչենկոն հավատում եր և հույս ուներ, Վոր իր յերիտասարդության մտերիմ բարեկամներն ինչպես և ինքը, կհասկանան, թե Վո'րտեղ ե ճշմարտությունը, ո'ւր ե այն ճա-

նադարձը, Վորով պետք ե ընթանալ, Վորպես— գի վերջ տրվի ժողովրդի վոչ մարդկային ճնշված վիճակին և խայտառակ սորուկությանը, ուստի և վերջնականապես կապերը չեր խզում նրանց հետ:

Պետերբուրգ վերադառնալու առաջին իսկ օրերից նա շատ եր աշխատում Ակադեմիայում: Նա ձգտում եր լրացնել իրացրած ժամանակը:

Շեվչենկոյի այս ժամանակաշրջանի նրկարչական աշխատանքները խիստ տարբերվում են վաղ շրջանի նրա գործերից: Այստեղ նրա յերբեմնի ուսմանաիզմի նշույն ել չկա: Նա նկարում ե իր մայրենի յերկրի կենցաղը, բազմաթիվ նկարահուշեր ե անում գորանուցային դոժան կյանքի մասին: Դա իսկական ուսուլիզմ ե:

1859 թվի գարնանը նա ուղևորվեց դեպի Կիրիլովկա:

Նա Ուկրաինա մեկնեց Վորպես մեծ պոետ: Սակայն ցարական ոխրանկան նրա հետեից հրամանադիր ուղարկեց. «Ստով հրկողություն ունենալ պաշտոնաթող գինվոր Տարաս Շեվչենկոյի նկատմամբ»: Ռուսական չինովնիկների համար նա սոսկ մի պաշտոնաթող գինվոր եր—վոչ ավելին:

Նա քիչ ժամանակ ապրեց իր քույրերի ու յեղբայրների մոտ: Նրանք դեռևս ճորտեր եին: Շեվչենկոն նրանց մոտից մեկնեց կրկնա-

սլատիկ ատելությամբ դեպի ժողովուրդը
կեղեքողները:

Նա այցելեց Վոչ միայն Կիրիլովկան,—
յեղավ Չերկասսիում, Կիևում, ուրիշ չառ-
վայրերում: Միխայիլովա Գորա կոչված ավա-
նում նրան ձերբակալեցին աստված-հայհո-
յության և դեպի տեղական իշխանությունը
ցույց տված անհարգալից վերաբերմունքի
համար: Կիևի նահանգապետը նրան առաջար-
կեց չուտափուլթ վերադառնալ Պետերբուրգ:
Ուկրաինայում նրանից վախենում էին: Նախ-
կին ատելությունը դեպի կալվածատերերը,
սերտերները և ցարը նրա մեջ բորբոքվում
էր ավելի ու ավելի ուժեղ թափով:

Նա վերադարձավ Պետերբուրգ: Առաջվա-
նից ավելի թունդ վեճեր սկսվեցին նրա բարե-
կամների հետ: Նրանք Շեվչենկոյին նախա-
տում էին կտրուկության, անզուգուցության
հաճար: Նրանք փորձում են Շեվչենկոյին խա-
ղաղացնել իրենց լիբերալ դատարկությամբ: Շեվ-
չենկոն անձնատուր չի լինում: Նա պնդում է
վոր պոեզիան պետք է լինի ահազանգի կոչնակ:

Նա գրում է.

Ցարերին-արքայազններին պանդուկապաններին

Ամուր շղթաներ գարկեցեք,

Խոր գերեզմանոցում փակեցեք:

Եյս խոսքերը հեղափոխության մարտակոչ են
հանդիսանում:

Նա գրում է.

...Մենք լավ կանենք, յեղբայրներ,
Արքայական ծիրանուց կտրենք փաթթաններ,
Բուրվառի միջից ծխախոտ ծխենք,
Ոջախում վառենք սրբապատկերներ,
Իսկ ցող-ավելով, յեղբայրներ, ավենք—
Ապագա Խրեթի հատակը մաքրենք:

Նա մի բանաստեղծություն է գրում Թա-
գուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնայի—ինչպես
հեղափոխականներն էին անվանում նրան—
«չըջաղեցստ հազած դահճի»—մահվան առ-
թիվ.

...Քեզ, ո՛վ քած շնամեր,

Յե՛վ մենք ինքներս և բռնները մեր

Ու արար-աշխարհ պիտի անիծեն:

Ձե՛ն ել անիծի, այլ սոսկ կքե՛նեն

Այն ճարպակալած շան-լակոտներից,

Վոր դու ցնկնել ես: Տանջանք, ո՛ր տանջանք,

Վո՛ւ իմ վիշտ, քախիծ և իմ տառապանք,

Վերջ պիտ ունենա՞ք: Թե՞ իր շներով—

Թե հլու-ստրուկ միևիստրներով

Ցարը հալածի, հոգի՞ս պիտ հանի:

Չի՛ կարողանա: Բնա՛վ փորձու՞նք չի,

Յերբ ցարին տանեն... Կառափնարանի

Կոնդի յերեսին մարմինը հանգչի...

Ինչի՛ մասին ել Վոր նա գրելու լիներ,
ո՛ւմ ել Վոր նա գրմելու լիներ,— միշտ հար-
ձակվում էր ինքնակալության, թագապսակ
դահլիճները և նրանց անարդ Վոհմակի վրա:

Ո՛ր խեղճ մարդիկ դուք կուրացած,
Ձեզ ի՞նչ պետք են միվաղ-ցարեր—
Արյունաբբու շնապաններ.
Խում շնե՞ր չեք շղթա գարկած:
Կգա՞ արդյոք դատ-դատարան
Յերկրիս բոլոր շուն-ցարերին,
Շուն ցարերի լակոտներին
Արդար պատիժ՝ հախ-դատաստան:

Նա անհաշտ թշնամի յեր ցարական իրա-
վակարգին, ճորտատիրությանը, կարվածա-
տերերին, այդ բոլոր «արյունաբբու պանդո-
կապաններին»: Նա հասկանում էր, Վոր դորժ
է պետք և Վոչ թե բառեր: Նա գրել է.

...Ձսպանե՛ս բարիք,

Յերբե՛ք չսպանես դու ազատությամբ—
Այն խոշտանգել է նիկոլայ-չարիք.
Իր վոտով չի գա որը խնդությամբ:
Սուրբ ազատության զարթոնքի համար

Կռի՛ր ու կռի՛ր կացմի կոթառներ,
Պետք է սուր սրի աշխարհը—արար
Իր լայնաբերան մեծ-մեծ տապարներ.
Այն ժամ շուտ կգա որն ազատությամբ:

Նա կաթողին սիրում էր իր հայրենիքը,
օսկայն նրա համար ուռւ ճորտ-գյուղացիները
և ուռւ աշխատավորները նույնպես մոտ էյին
ու սիրելի, ինչպես և իր հայրենակիցները:
Նա ջերմորեն կարեկցում էր բոլոր ճնշված
ժողովուրդներին և ատելով ատում էր բոլոր
ազգությունների կեղեքիչներին: Այս էր ահա
պատճառը, Վոր նա մեծարում էր Գերցենին,
Չերնիշևսկուն, Դորբոլյուբովին և ժողովրդ-
դական այլ պաշտպանների, այս պատճառով
էր, Վոր նա այնպիսի ակնածանքով էր խոսում
ու գրում դեկաբրիստների և հազարավոր
ոռւ հեղափոխականների մասին, Վորոնք հե-
ծում էյին բանտերում և տաժանակրության
մեջ:

Ուկրաինա մեկնելուց հետո Շեվչենկոն էլ
ավելի հաստատուն մոտեցավ հեղափոխական
դեմոկրատիայի առաջավոր մարդկանց հետ—
«Современник»-ի խմբակի, Չերնիշևսկու, Դոր-
բոլյուբովի, պոետ Կուրոչկինի և ուրիշ-
ների հետ, Վորոնց հայացքները միանգամայն
տարամերժ էյին Կոստոմարովի*), Կուլիչի և

*) Ն. Կոստոմարով (1817-1885)—հայտնի ուկրաի-
նական պատմաբան, Կիրիլ-Մեֆոդյան յեղբայ-

ուկրաինացիներ ալ լիբերալներ հայացքներ հետ:

Այս մերձեցումը նրան ամբողջական հեղափոխական դիրքերի վրա, դատեց հեղափոխական դեմոկրատիայի մեծ մարդկանց շարքը:

Շեվչենկոյի և նրա նախնիներ բարեկամներն ինչեւ, — վորոնք լիբերալ ու շովինիստ եյին զարձեւ և արդեն պատրաստել էյին իրենց լիակատար անցումը դեպի ռեակցիայի բանակը, — անդունդ առաջացաւ: Ուստի և հասկանալի յե, վոր շատ տարիներ ընթացքում բարեկամութեան կապերով միմյանց հետ կապված մարդիկ պետք է խզեյին:

Մահը խանդարեց այդ խզումը լիակատար անելու:

1860 թվի վերջին Շեվչենկոն ծանր հի-

ւումից անդամ: Շեվչենկոն նրան իր մոտ բարեկամներ համարում, մինչեւ Կոստոմարովը յերբեք համախոհ չէր Շեվչենկոյի հեղափոխական համոզմունքներին: Կը չափավոր լիբերալ էր և ձերբակալութունից հետո սաստիկ աջացաւ: Հարցաքննութեան ժամանակ նա հրաժարվեց Շեվչենկոյից և հայտնեց, վոր յերբեք չի բաժանել նրա մտքերը: Շեվչենկոն անտեղյակ էր նրա այդ ցուցմունքներին, յերբ նրան եր նվիրում իր սրտաբուլի տողերը, նոսա՞ծ դադանի վոստիկանութեան՝ այսպէս կոչված Յերրորդ բաժանմունքի բանտում: Ծ. Թ.

վանդացաւ: 1861 թվի փետրվարի 26-ին նա մեռաւ:

Մեծ պոետ-հեղափոխական Նեկրասովը ներաթափանց տողերում վողբաց իր յեղբայրակցի մահը:

Մի՛ տարվեք խորին հուսալուքյամբ*)

Դա համարյա քե ցանկալի դեպք էր.

վաղուց ասածու վոզումածուքյաք

Այսպէս մեռում եմ ուսու հայտնի դեմքեր:

Զանիլ որերին՝ ցալ ու տառապանք,

Համարձակ մտեր ու խելառ պայքար—

Հույս-հրապուրանք, ցնորք ու տենչանք,

Ապա ախորի տարիներ յերկար...

*) Հիսունական թվականների վերջին, յերբ Շեվչենկոն վերադարձաւ աքսորավայրից, Նեկրասովը ին «Современник»-ում սիրով զետեղում էր նրա բանաստեղծութունների ոտներեն թարգմանութունները:

1867 թվին Պետերբուրգի շրջանային դատարանում քննվում էր յերկու հրատարակչների դատավեճը՝ առաջացած Շեվչենկոյի «Родзарь» դրքի հրատարակութեան շուրջը, — Նեկրասովը հանդես է դալիս վորպէս երսպերտ և մեծադույն համակրանքով խոսում «Родзарь»-ի հեղինակի մասին:

Այս բանաստեղծութունը Նեկրասովի կենդանութեան որով լույս չի տեսել: Առաջին անգամ այն տպվել է «Зоря» ժուռնալում, № 6, 1886 թ. (Լվով), «На смерть Шевченко» խորագրով:

Թարգմ.

Նա լի նաշակեց ամեն դառնություն—
 Հարցմունք— քննություն, բանտ Պետերբուրգի
 Յեվ ժանդարմների սիրալիրություն.
 Ճաշակեց նաև չոր Որենբուրգի
 Բերդը կալանքի, արձակ տափաստան,
 Ամեն գոհիկից խոցված—խոշոտանգված,
 Անհայտության մեջ, կարիքից նեղված,
 Վարպես մի գինվոր ապրեց իր նման
 Զինվորների հետ՝ խեղճ, վոդորմելի՝
 Անշուշտ և մեռնել հեշտ եր կարելի
 Հարվածների տակ գամակոծության.
 Գո՛ւցե ապրում եր հույսով նա մահվան:
 Սակայն չկամեց կարնել տանջանք—
 Նախատեսությամբ ոռւս մարդկանց արի
 Վերջացավ նրա ցավ—տառապանքը,
 Տոկաց ախոբի մի տասնյակ տարի:
 Ժպտաց ամեն ինչ՝ սիրելի սրտին՝
 Վոր նա չեր տեսել իր վաղ հասակին.
 Սակայն այդ պահին աստված նախանձեց—
 կյանքը կտրվեց...

Շեվչենկոյին թաղեցին Պետերբուրգում:
 Սակայն չուտով նրա աճյունը տեղափոխվեց
 Դնեպրի ափը, Կանեվ քաղաքի մոտ, վորով—
 հետև իր «Завещание» մեջ նա՝ իր մահից
 տարիներ առաջ՝ գրել եր.



Տ. Դ. Շեվչենկո. Ինքնանկար. 1860 թ.

Յերբ մեռնեմ՝ իմն թաղեմ
Իմ ամուշ յերկրում...
Շիրիմս փորեցեմ
Լայն դաշտի միջում,
Վար պառկած կուրգամին—
Դմեպրի՝ ծեր հգոր՝
Լսեմ մոլեգին
Աղմուկն ամեն ուր...

Ժողովուրդը հոծ բազմությամբ այցի եր
գնում իր պոետի գերեզմանին։ Ցարական իշ-
խանություններն անհանգստանում եյին՝ չլի-
նի՝ թե հուզմունքներ լինեն։

Շեվչենկոյի գերեզմանի մոտ հաճախ
ժանդարմներ եյին հայտնվում։ Պոետի թա-
ղումից յերկու ամիս հետո կանեվի ազնվա-
կանները հետեյալ զանգատը գրեցին Կիևի
գեներալ նահանգապետին.

«Գերեզմանի մոտ, ուր հանդչում է Շեվ-
չենկոն, վորին հասարակ ժողովուրդը սկսել
է մարգարե համարել, իսկ նրա ամեն մի
խոսքը՝ պատգամ, շատ մարդիկ են հավաք-
վում և լուր է տարածվում գյուղացիների
հույսերի մասին—ձրիաբար զավթել կալվածա-
տիրական հողերը, ինչպես և գերեզմանում՝
Շեվչենկոյի աճյունի վրա՝ թաղված սրբա-
դան դանակների մասին և վոր մօտ է ժամը,
յերբ առաջվա պես պիտի մորթոտեն ժողո-
վըրդի իրավունքները թագցնող պաներին,
չինովնիկներին և հոգևորականությանը»։

Կալվածատերերը և ազնվականները պահանջում էին Շեվչենկոյի աճյունը տեղափոխել վորես խուլ վայր, ուր «անհնար լինելիս հավաքույթներն ու դեմոնստրացիաները»:

1914 թվին մտադրութուն կար նշել Շեվչենկոյի ծննդյան հարյուրամյակը: Ֆարական իշխանություններն արգելեցին մեծարանք կազմակերպել պոետի հիշատակին:

«Շեվչենկոյին մեծարանք արգելելը, — դրել է Վ. Ի. Լենինը «Աղգային քաղաքականության հարցի վերաբերյալ» հոդվածում, դա այնպիսի մի հրաշալի, հոյակապ, բացառիկ բարեբախտ ու հաջող միջոց էր՝ կառավարության դեմ մղվող ազիտացիայի տեսակետից, վոր դրանից լավ ազիտացիա անհնար է պատկերացնել: Յես կարծում եմ, վոր մեր բոլոր լավագույն սոցիալ-դեմոկրատական ազիտատորները չեյին կարողանա այդպիսի կարճ ժամանակամիջոցում ընդգեմ կառավարության հասնել այդպիսի գլխապտույտ հաջողությունների, վոր ունեցավ այդ արգելքը հակակառավարականի մտքով: Այդ միջոցառումից հետո միլիոնավոր և միլիոնավոր «որիփատելներ» սկսեցին գիտակից քաղաքացիներ դառնալ և համոզվել, վոր ճիշտ է այն ասույթը, թե Ռուսաստանը «ժողովուրդների բանտ է»: (Լենին, Յերկեր, հ. XVII, էջ 324—3—5):

Շեվչենկոյի ստեղծագործությունը հեղափոխական մեծ նշանակութուն է ունեցել:

Սակայն պահաս մեծ չե նաև նրա գրական նշանակությունը:

Մինչ Շեվչենկոն ուկրաինական գրականությունն իր իդեալները սոսկ հին անցյալից էր վերցնում: Շեվչենկոն առաջ մղեց միանգամայն պարզ և վորոշ սոցիալ-քաղաքական խնդիրներն իր հայրենիքի և ուկրաինական գրականության առաջ: Այդ գրականությունը նա դուրս բերեց ռեալիզմի ուղին:

Շեվչենկոն խոշորագույն դեր է կատարել ուկրաինական գրական լեզվի զարգացման գործում: Իր ամբողջ ստեղծագործությամբ, վորի աղբյուրը յեղել է ժողովրդական պոեզիան և ժողովրդական կենդանի խոսքը, նա չույց տվեց ուկրաինական ժողովրդի լեզվի մեծ ուժը, թարմությունը, անմիջականությունն ու հմայիչ, գուրեզ գեղեցկությունը:

Հիրավի, նա մեծ մարդ էր և մեծ պոետ: Իդուր չե, վոր նրա յերկերը միլիոնավոր մարդկանց են դատախարակել:

Ուկրաինական աղգայնականները, ժողովրդի թշնամիները փորձում էին կեղծել Շեվչենկոյի դասակարգային եյությունը: Նրանք ձգտում էին իրենց թշնամական նպատակների համար ոգտագործել Շեվչենկոյի յերկերը: Սակայն դա նրանց չհաջողվեց, նրանց ստոր մտահղացումներն ու արարքները մերկացված են և այժմ նրանք վոչ վոքի խաբել չեն կարող:

Շեվչենկոն յեղել է ճնշված, հարստա-
հարված գյուղացիության և գյուղացիական
հեղափոխության յերգիչն ու տրիբունը—
այդպիսին ել նա մնում է մեզ՝ մեծ խորհրդ-
դային Միության քաղաքացիներին համար:
Մարդկության պատմության մեջ առաջին ան-
գամ իրականացված է ժողովուրդների բարե-
կամությունը, վորի մասին յերազում եր մեծ
պոետը: Մեր յերկրում սոցիալիզմ է կառուց-
ված: «Ժողովուրդների բանտ» կոչված յերկիրը
զարծել է աշխարհիս ամենագորեղ և ծաղկած
պետությունը: Հսկայական մի փարոսի պես
այն բարձրանում է աշխարհիս վրա, ամբողջ
աշխատավոր մարդկությանը ցույց տալով
յերջանիկ կյանքի ուղին: Վո՞րքան կուրախա-
նար Շեվչենկոն, յեթե տեսնել կարողանար իր
նվիրական Ուկրաինան հիմա:

Պատ. խմբագիր՝ Հ. Պարսեյան
Լեզվական խմբագիր՝ Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Գասպարյան
Մրթագրիչներ՝ Ա. Արզախանյան, Բ. Ղուկասյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Յե.Տ.-Միմասյան

Գլավխիտի լիազոր՝ Բ.—1093. Հրատ. 5022.
Պատվեր 790. Տիրաժ 3000.

ՀՀ Ազգային գրադարան



NL0329299

15714

20010

100

100